


17 1853

Q-47



105

0044

7 1 4 0 3 4



1750

1750



17-25810

ՈՒՄԿԻ ԳՐԳՈՅԿ

Կ Ա Մ

ԳՈՐԾԵԱԿԱՆ

ԽՈՒՍԵՐՀՈՒԹԻՒՆ



Վ Ի Է Ն Ն Ա

Գ. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆԻԸ

1853

10-25810

~~4/336-w/~~

315-42



24743-61

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՊԻՆԹԷ Հարիւր անգամէն աւելի է, որ աս գրքոյկը տպագրուեցաւ գաղիերէն լեզուաւ, որմէ մեր հայերէնն ալ թարգմանուեցաւ :

Թէ որ աս ստէպ տպագրութեան հարկաւորութիւնը աս փոքրիկ գրուածքին բաւական արժողութիւն կու տայ նէ, կրնայ նաեւ իրաւամբ յուսացուիլ, որ հայերէն թարգմանութիւն մ'ալ որն որ առջի անգամ երեւան կ'ելլէ, մեծ յարգ ունենայ ու

Հաճութեամբ ընդունելութիւն
գտնէ, մանաւանդ քանի մը սրբոյ
հարց ու հռչակաւոր հեղինակաց
խոնարհութեան վրայ գրած վճիռ-
ներուն յաւելուածովը:

Աս գործքին բուն հեղինակը
Սպանիացի քահանայ մըն է, որն
որ աս գիրքն իր վանքին կրօնա-
ւորներուն գործածութեան հա-
մար շարադրած է: Բայց որով-
հետեւ խոնարհութեան կրթու-
թիւնը որոշեալ վիճակի մը հա-
մար սահմանուած չէ, այլ ամէն
քրիստոնեայ, ինչ վիճակի ու
տիոց մէջ որ ըլլայ, պարտաւորու-
թիւն ունի դիմելու կատարելու-
թեան, որուն մինակ խոնարհու-
թեան ճամբով կրնայ հասնիլ,
ուստի անժխտելի բան մըն է, որ

աս գրքոյկը ամենուէն օգտակար
ու հարկաւոր է :

Իրաւամբ ալ աս գիրքը ՈՍԿԻ
ՔՐԹՈՅԿ անուէնը կը կրէ, «-
րովհետեւ քրիստոնէական իմաս-
տութեան անդին դանձն իր մէջն
ունի, զորն որ Իմաստնոյն վճռոյն
համաձայն՝ պէտք է ամէն դանձե-
րէն վեր սեպել : Խոնարհութիւ-
նը քրիստոսի աշակերտաց բուն
նշանակն է, ինչու որ մեծ բլլա-
լու համար պէտք է, ինչպէս Ս.
Ամբրոսիոս կ'ըսէ, անկից սկսիլ,
որ մարդ ինք զինքը խոնարհեցը-
նէ : Եւ այսպէս կը մեկնէ իր
խօսքն աս եկեղեցւոյ վարդապե-
տը. «Միտք ունիս, կ'ըսէ, քրիս-
տոնէական առաքինութեանց շէն-
քը կառուցանել, բայց շատ մեծ

բարձրութիւն ունի անիկայ . ա-
նոր համար ջանա որ խոնարհու-
թեամբ անոր խորունկ հիմ մը
դնես , որպէս զի հաստատուն
ըլլայ :

Բայց թէ աս հիմն ինչպէս
պիտ'որ դրուի , աս փոքրիկ գրքոյ-
կը եղանակը կը սորվեցընէ :



ՈՍԿԻ ԳՐԳՈՅԿ

Կ Ա Մ

Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ա Ն

Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՍՏԱՏՈՒՆ ու աներկբայ ճշմարտութիւն մըն է՝ որ հպարտներուն եւ բարձրամիտներուն գթութիւն չկայ, եւ երկնից արքայութեան դուռն իրենց գոցուած է. որովհետեւ միայն խոնարհները կ'ընդունի Աստուած հոն: Ս. Գիրքը մեզի կը սորվեցընէ թէ Աստուած ամբարտաւանից հակառակ է, թէ Իրենք զիրենք բարձրացընողները կը խոնարհեցընէ, եւ թէ Արքայութիւն մտնելու համար պէտք է պզտիկ տղոց նման ըլլալ, եւ աս նմանութիւնը չունեցողներն անկից

պիտ'որ զրկուին : Աերջապէս թէ
 Աստուած իր շնորհքը խոնարհնե-
 բուն վրայ կը հեղու եւ խոնարհ-
 ները կը բարձրացընէ :

Ասիկա դնելով, պէտք է որ սըր-
 տանց համոզուինք թէ ինչչափ հար-
 կաւոր բան է քրիստոնէի մը խո-
 նարհ ըլլալ ջանալն ու մտքին մե-
 ջէն ամէն տեսակ մեծամտութիւնն,
 ունայնութիւնն ու հպարտութիւնը
 մերժելը : Այսպիսի սուրբ գործք
 մը յաջողցընելու համար պէտք է
 որ ամէն ճիգն ի գործ դնէ . եւ ո-
 բովհետեւ առանց Աստուծոյ շնոր-
 հաց չիկրնար գլուխ հանել, անոր
 համար միշտ ու օրուան ամէն մէկ
 ժամուն պէտք է Աստուծմէ խըն-
 դրել :

Ամէն քրիստոնեայ մկրտութեան
 ատեն Յիսուսի Քրիստոսի շաւղաց
 ետեւէն երթալու պարտուց տակ
 մտած է, եւ պէտք է որ նոյն աս-
 տուածային օրինակին յարմարցը-
 նենք մեր վարքը : Քրիստոս խոնար-
 հութիւնն այնպիսի աստիճանի մը
 հասցուց՝ որ մինչեւ յանձն առաւ

մարդիկներէն նախատինք ու արհամարհանք ընդունիլ, որպէս զի անով մեր հպարտութիւնը բժշկէ, իրեն օրինակաւը սորվեցընելով մեզի արքայութիւն տանող ճամբան:

Ուստի դուն ալ, որ աս աստուածային վարդապետին աշակերտն ես, թէ որ կ'ուզես նոյն պատուական մարգարիտը ստանալ, որն որ սըրբութեան մէկ ստոյգ եւ ապահով գրաւականն ու նախասահմանեալ ըլլալու նշան մըն է, հլու մտօք քեզի տալու խրատներս ընդունէ, եւ զգուշութեամբ ու ճշգիւ ի գործ դիր:

1. Թէ որ հոգւոյդ աչուրները բանաս, կը տեսնես որ դուն քեզմէ ամենեւին աղէկ բան մը չունիս, որուն համար ինք զինքդ կարենաս գովել ու բարձրացընել: Ներսէզ՝ մեղքէն, ստութենէն ու թշուառութենէն ուրիշ բան մը չիբխեր. իսկ ունեցած բնութեան ու շնորհաց պարգեւներդ՝ Աստուծմէ ընդունած ըլլալովդ, որն որ քու գոյութեանդ սկիզբն է, բոլորն ալ

իրեն պարտական ես, փառքն ու պատիւն անոր սեպհական են :

2. Ասկից քու ոչքնչութեանդ վրայ խորունկ համոզում մ'ունեցիր, ու նայէ որ միշտ աս համոզումը սրտիդ մէջ սնուցանես, քու վրագ տիրած հպարտութեան վրայ մեծապէս ամչնալով : Ներքուստ համոզուէ, որ աշխարհքիս մէջ իրմէ չունեցած՝ հասպա Աստուծոյ առատաձեռնութենէն փոխ առած առաւելութեանց համար պարծենալ ուղեղէն աւելի սնտոի ու ծիծաղական բան չկայ. ինչու որ ինչպէս Առաքեալը կ'ըսէ. «Եթէ առեր՝ զի պարծիս իբրեւ զչառեալ» : (Ա. Կոր. Գ. 7 :))

3. Շատ անգամ քու տկարութեանդ, կուրութեանդ, թուլութեանդ, խստասրտութեանդ, անհաստատութեանդ, հեշտասիրութեանդ, առ Աստուած անտարբեր ըլլալուդ, արարածոց վրայ ունեցած սիրոյդ եւ ասոնց նման չար հանգամանացդ վրայ մտածէ, որոնցմով քու ասպականած խառնուածքդ

ընցուն է : Առիթ առ ասկից անդա-
դար զքեզ ոչընչէն ալ աւելի խո-
նարհեցընելու եւ միշտ քու աչացդ
նուստ ու անարգ երեւալու :

4. Քու անցած մեղքերուդ յի-
շատակը երբեք մտքէդ չելլէ : Մա-
նաւանդ մտքդ դիր որ հպարտու-
թիւնն այնպէս չար բան մըն է , որ ոչ
աշխարհքիս եւ ոչ ալ դժոխքին մէջ
այնպէս չարիք մը կայ՝ որ կարենայ
անոր հետ բաղդատուիլ : Հպար-
տութիւնն է որ հրեշտակները եր-
կինքէն զրկեց , եւ զանոնք դժոխք
թափեց , ամբարտաւանութիւնն է
որ բոլոր մարդկային ազգն ապակա-
նեց , եւ աս աշխարհքիս վրայ բերաւ
այն անբաւ չարիքները՝ որոնք մինչեւ
աշխարհքիս վերջը , կամ աւելի ա-
ղէկ ըսելու համար՝ բոլոր յաւիտե-
նականութեան մէջ պիտի տեւեն .
վերջապէս մեղօք աղտեղած հոգի մը
ատելութենէ , անարգութենէ ու
տանջանքէ ուրիշ բանի արժանի չէ :
Ասկից ուրեմն դատաստան ըրէ , թէ
ինչ համարում պէտք ես ունենալ
քու անձինդ վրայ , այնչափ յան-

ցանքներէ ետեւ, որոնց ինք զինքդ պարտաւոր ըրած ես :

5. Գարձեալ մտածէ որ չկայ մէկ յանցանք մը, որչափ մեծ ու զազիր ալ ըլլայ, զորն որ կարող չըլլաս գործել, որուն՝ քու ապականեալ սիրտդ միտում մը չունենայ, եւ որմէ մինակ Աստուծոյ ողորմութեամբն ու անոր շնորհաց օգնութեամբը զերծ պահուած չըլլաս, Ս. Օգոստինոսին հռչակաւոր վճռոյն հետեւելով, որ կ'ըսէ. «Չկայ մեզք մը՝ որ մէկէ մը գործուած ըլլայ, եւ զորն որ ուրիշ մը չկարենայ գործել, թէ որ զմարդն ստեղծող ձեռքը՝ զանիկայ բռնելէն դադրելու ըլլայ», : Ներքուստ ցաւէ այսպիսի աղէտալի վիճակի մը վրայ, ու հաստատուն առաջադրութիւն դիր որ ինք զինքդ ամենէն մեծ մեղաւորաց կարգը դասես :

6. Ստէպ յիշէ որ մահը քու վրադ պիտ'որ տիրէ ու մարմինդ փտութեան տակ պիտ'որ իյնայ, որմէ չես կրնար զերծ ըլլալ. եւ մտածէ որ Աստուծոյ ահեղ դա-

տաստանին առջին հարկաւ պիտ'որ
 երեւաս . դարձեալ խորհէ դժոխ-
 քին տանջանքները՝ որոնք չարե-
 րուն համար պատրաստուած են ,
 եւ գլխաւորաբար հպարտներուն
 ու սանդարամեաին նմանողներուն
 համար : Ձգուշութեամբ մտածէ
 թէ որովհետեւ Աստուծոյ դա-
 տաստանները դաղանի ու անիմա-
 նալի են , չես կրնար ստուգութիւն
 ժ'ուենենալ , որ օր մը դուն ալ դա-
 տապարտելոց կարգը պիտի չգըա-
 նուիս , որոնք աս տանջանաց տեղը
 սատանաներուն հետ յաւիտեանս
 պիտ'որ տանջուին : Աս անստու-
 գութիւնը միայն պէտք է զքեզ ար-
 տաքոյ կարգի խոնարհութեան մը
 մէջ բռնել եւ զքեզ միշտ ամօթով
 ծածկել :

Չ . Մի յուսար որ խոնարհու-
 թիւնը կարենաս ստանալ առանց
 պատշաճ խոնարհական գործքերու ,
 ինչպէս է հեզութիւն , համբերու-
 թիւն , հնազանդութիւն , մեռու-
 ցում , անձնատեցութիւն , իր կար-
 ծիրն ուրանալ , իր յանցանքները

խոստովանիլ ու անոնց վրայ ամբշնայլ եւ ասոնց նման դործքեր . վասն զի ասոնք միայն կրնան կործանել քու անձնասիրութեանդ տէրութիւնը, այն թշուառ խորքը՝ ուսկից քու ամէն չարութիւններդ յառաջ կու գան, եւ որմէ մանաւանդ քու հպարտութիւնդ ու յանձնապատանութիւնդ կը ծնանին :

Տ . Որչափ որ կրնաս՝ ինք զինքդ լռութեան մէջ ու ամիտի պահէ . բայց առանց ուրիշին ծանրութիւն ու անհանգստութիւն պատճառելու . եւ թէ որ խօսելու կ'ըլլաս՝ միշտ պարկեշտութեամբ ու ծանրութեամբ խօսէ, եւ իբր վախով ու միտքդ դնելով թէ արժանի չես որ ուրիշները զքեզ մտիկ ընեն, եւ թէ չես կրնար բարի բան մը խօսիլ, որ ուրիշներուն մտադրութիւնը կարենայ քեզի ձգել : Եւ թէ որ իբօք ալ այնպէս պատահի որ զքեզ մտիկ չընեն՝ զքեզ անարգելու եւ արհամարհելու մտօք եւ կամ ուրիշ պատճառի մը համար, ամենեւին նեղսրտութիւն մը մի

ցուցընէր, մանաւանդ թէ ներքուստ ուրախացիր այսպիսի անարդու թեան վրայ. համոզուէ որ աս կերպ վարուելու իրաւունք ունին, եւ ինք իրենդ ըսէ. Ես ո՞վ եմ որ ուրիշներուն միտքն իմ մտածմունքներովս ու երեւակայութիւններովս լեցընել պիտ'որ ուզեմ:

9. Ամէն պերճ ու հպարտական խօսակցութիւններէ եւ ճոխութիւն մը ցուցընող խօսքերէ, գեղեցիկ ու զուարճախօս դարձուածներէն մեծ փութով փախիր. այնպիսի խօսք մի խօսիր, որ կարենայ ուրիշներուն զքեզ խելացի, պատուաւոր, յարգելի, գործքերու մէջ մտած ելած կամ թէ ուրիշ ձիրքերով զարդարուած կարծել տալ: Մէկ խօսքով՝ երբեք անձինդ վրայ մի խօսիր ու քեզի գովեստ քերող խօսքերէն փախիր:

10. Խօսակցութեանց մէջ հեռու կեցիր նաեւ խօսքի ճարտարութիւն կամ յարմար խօսքեր ըսուածներէն, կատակարանութիւններէ ու զուարճախօսութիւններէ,

վերջապէս ան ամէն բաներէն, որոնք աշխարհական կը շնչեն. նաեւ հոգեւոր իրերու վրայ ալ վարդապետական, խրատական ու կրթական եղանակաւ մի խօսիր, թէ որ ի պաշտօնէ չես պարտաւորեալ նէ. շատացիր անոնց վրայ խօսելու՝ հարցումներ քննելով հմուտ եղողներուն, որոնցմէ կրնաս լուսաւորութիւններ քնդունիլ. վասն զի ուրիշներուն հոգեւոր դասեր ու խրատներ տալն այնպէս բան մըն է՝ որ մարդը հմուտ ու լուսաւորեալ կարծել կու տայ եւ կը սնուցանէ հպարտութիւնը՝ որով մեր սիրտն ապականած է:

11. Որչափ որ կրնաս՝ հետաքրքրութենէ փախիր. աշխարհքիս մէջ գեղեցիկ, հազուագիւտ ու չքնաղ իրեր տեսնելու ետեւէ մ'ըլլար. երբեք քու պարտքերուդ վերաբերած կամ քու կատարելութեանդ ու փրկութեանդ օգնող բաներէն զառ բան մը գիտնալ մի բաղձար:

12. Ուրիշներուն ամէն տեսակ

յարգութիւն ու պատիւ ընելու մէջ ճիշդ ու մտադիր եղիր. եւ չէ թէ մինակ քեզմէ վեր եղողներուն, այլ նաեւ քեզի հաւասար ու քեզմէ ստորին եղողներուն ալ պատիւ ընելու մէջ առաջինն եղիր, Ս. Պօղոս առաքելոյն խրատին հետեւելով որ կ'ըսէ, «Միշտ առջինն եղէք իւրաքանչիւրոց ըստ որոշեալ սովորութեան ձեր յարգութիւնն ընելու. նաեւ ջանացէք իւրաքանչիւրոց՝ պարտաւորութենէ աւելի յարգութիւն ընելու» :

13. Աւետարանին սկզբանց հետեւելով, յետին ու նուաստ տեղը քեզի ընտրէ. անկեղծութեամբ հաւատա որ ան տեղը քեզի յարմար ու պատշաճ է. կենաց ամէն հարկաւոր եղած բաներէն ամենէն անարգն եւ ուրիշներէն արհամարհուածներն ընտրէ, առ. համոզուէ որ ուրիշներն ամենէն աղէկները պէտք են ունենալ, իսկ դուն՝ ամենէն անարգները քու անարժանութեանդ համար. բոլոր սրտանց բաղձա որ ամէն առթի

մէջ այսպէս անարդէները քեզի ըն-
տրես :

14. Ինչ եւ իցէ՝ թէ՛ ժամանա-
կաւոր քաղցրութենէ ու թէ՛ հո-
գեւոր մխիթարութենէ զըկուելու
որ ըլլաս, միշտ դո՛հ եղիր, հաս-
տատութեամբ համոզուելով որ ա-
մէն բան քեզի առատութեամբ ու
արժանաւորութենէդ ալ աւելի
տրուած է :

15. Ինք զինքդ ամբաստանելէն,
յանդիմանելէն ու դատապարտե-
լէն երբեք մի դադրիր : Խստիւ քննէ
քու գործքերդ իբրեւ բիւրաւոր
անկատարութիւններով արատա-
ւորուած ու անձնասիրութեամբ
լեցուն : Միշտ քու վարմանցդ վրայ
արդար ատելութիւն մ'ունեցիր,
գործքերուդ մէջ գտնուող խոհե-
մութեան, անկեղծութեան ու
սրտի մաքրութեան պակասութեան
համար : Աերջապէս դուն քեզի
մշտնջենաւոր դատաւոր եղիր, ու
բան մը քեզի միներեր : Աս իր անձին
վրայ գէշ կարծիք ունենալը՝ միա-
ցեալ անձին ընթացքին վրայ ու-

նեցուած ասելու թեան հետ, խոնարհութեան ու քրիստոնէական կատարելութեան աղբիւրներն են :

16. Ներքուստ համոզուէ որ քու պակասութեանցդ յաճախութեամբն ու յանցանքներուդ մեծութեամբն ամենուն ծանրութիւն եղած ես : Եւ ստուգիւ յայտնիրան ալ է, որ մեղքը մարդուս հոգին Աստուծոյ ու մարդկանց առջեւ անհամեմատ աւելի դարշելի կ'ընէ, քան թէ դիակի մը նեխութիւնը՝ որն որ մարդս կը զգուեցընէ : Ասիկայ մտածելով՝ պէտք ես զարմանալ մարդկանց այսչափ երկայն ատեն զքեզ աշխարհքիս մէջ կրելուն ու ժանտախտէ բռնուածի մը պէս մարդկային ընկերութենէ բոլորովին չմերժելուն համար :

17. Իբրեւ մէկ մեծ չարիքէ մը՝ հեռու կեցիր ինչ եւ իցէ եղանակաւ որ ըլլայ ուրիշները դատելէն, ընդ հակառակն ջանա որ անոնց խօսածն ու դործածն ի բարին մեկնես, պատճառներ փնտռէ ու հնարքներ հնարէ զանոնք ջատա-

գոյլերու եւ պաշտպանելու, եւ քու
ընկերիդ իբրեւ փաստարան եղիր :
Իսկ թէ որ գործուած չարիքին շատ
յայտնի ըլլալուն համար պաշտ-
պանելն անկարելի է նէ, դար-
ձեալ որչափ որ կրնաս՝ անոնց
յանցանքը կամ անմտադրութեան,
կամ խարուած ըլլալու, կամ փոր-
ձութեան սաստկութեան, կամ
սատանային չարութեան՝ որ զա-
նոնք մոլորացուց, եւ կամ ասոնց
նման պատճառի մը տուր. գոնէ ա-
նոնց վրայ մի մտածեր, թէ որ չար-
եաց դարման մը չես կրնար տանիլ
նէ : Աս գործքն ալ ճշմարիտ խոնար-
հութեան սկիզբէն յառաջ կու գայ :

18. Արժեցուր ինք զինքդ խօ-
սակցութեան մէջ մէկու մը շքնդ-
դիմարանելու, երբ որ խօսքը տա-
րակուսական բանի մը վրայ է՝ որ
այսպէս ալ կրնայ ըլլալ, այնպէս
ալ. երբեք սաստկութեամբ մի
վիճեր, հասկա համեստութեամբ
զիջիր՝ թէ որ ուրիշները քու կար-
ծիքդ չեն հաւնիր, եւ խոնարհ
լռութեամբ մը կեցիր. այսպէս վա-

բուէ նաեւ թէպէտ ստոյգ գիտնաս
որ հաստատուած բանը ճշմարիտ չէ՝
երբ որ մեծ հետեւութիւն մը չի-
կրնար ունենալ : Ուրիշ առիթ-
ներու մէջ, թէ որ հարկ ըլլայ
ճշմարտութիւնը պաշտպանել՝ ա-
ռանց ղասման ու խստութեան
պաշտպանէ, ինչու որ քաղցրու-
թեամբ աւելի աղէկ կրնաս համո-
զել, քան թէ խստութեամբ ու
սաստկութեամբ :

19. Փոյթ տար որ ամէն բանի
մէջ չըլլայ թէ ընկերդ, որչափ որ
ալ քեզմէ վար ըլլայ, քու խօսքե-
րովդ, գործքերովդ ու վարմուն-
քովդ տրամեցընես, ամենեւին զին-
քը վշտացընելու առիթ մի տար,
թէ որ ի պարտուց, ի հնազան-
դութենէ եւ կամ ի սիրոյ սախ-
պեալ չես նէ. վասն զի եղբայրդ
տրամեցընելով զՔրիստոս տրամե-
ցուցած կ'ըլլաս, որն որ իրեն եղած
կը համարի՝ իր ամենափոքր ան-
դամներէն մէկուն եղածը :

20. Երբ որ մէկը քեզի ինչ եւ
իցէ անիրաւութիւն մ'ընէ, մի

սպասեր որ իր յանցանքը ճանչնայ
 ու քեզմէ գայ թողութիւն խըն-
 դրէ, հասկա իբր թէ վշտացողը
 դուն չես, անոր առջեւն առ, ու
 զինքը խոնարհութեամբ ընդունէ,
 եւ իբր թէ անոր նեղանալուն
 դուն պատճառ եղած ըլլաս, ար-
 դարացուր զինքն ու յանցանքը բո-
 լորովին քու վրայ ձգելով՝ թո-
 ղութիւն խնդրէ:

21. Թէ որ գտնուի մէկը՝ որ
 մասնաւոր զքեզ վշտացընելու ե-
 տելէ է ինկեր, եւ ամէն առ-
 թի մէջ թշնամանքներով, զրպար-
 տութիւններով, անարգանքներով
 եւ կամ ուրիշ կերպով զքեզ նե-
 ղելով հաճութիւն կը զգայ, զա-
 նիկայ իբրեւ Աստուծոյ գործիք
 համարէ, եւ այնպիսի մարդու մը
 տեղ դիր, որուն ձեռքովն Աս-
 տուած քու հպարտութեամբ ան-
 բուժելի եղած հոգիդ կ'ուզէ բժըշ-
 կել. վերջապէս զինքն իբրեւ մեծ
 բարեբարի մը պէս սիրէ:

22. Բարկութիւնն անտանելի
 բան մըն է, մանաւանդ աստուած-

պաշտու[թեան և տեւէ ինկող անձի
 մը մըայ, եւ աս մտու[թիւնն իր
 սասակու[թիւնը կ'առնէ մեր հպար-
 տու[թեանէն . ուստի ջանա այսպիսի
 ախտի մը դէմ դնել հանդարտու-
 [թեան ու հեզու[թեան դործքե-
 րով, եւ ան սատիճանի հասցուր
 աս առաքինու[թիւնը՝ որ ե[թէ մէ-
 կէ մը նախատուիս, որչափ որ ալ
 անիրաւու[թիւնը խիստ ըլլայ, չէ
 [թէ մինակ չբարկանաս, հապա
 նաեւ խոնարհու[թեամբ երթաս
 աղաչես որ քեզի ներէ :

23. Համբերու[թեամբ, հեզու-
 [թեամբ ու մարդասիրու[թեամբ
 տար ուրիշներուն պակասու[թեան
 ու տկարու[թեան, եւ մի կարծեր
 որ նոյնպէս ուրիշներն ալ քու-
 կիններդ տանելու պարտական են .
 անոր հակառակ համոզուէ որ քեզի
 դէմ գեռ այնչափ խստու[թիւն մը
 չեն բանեցըներ . որովհետեւ քու
 պակասու[թեանցդ համար ամենեւին
 գ[թու[թեան արժանի չես :

24. Ե[թէ մէկու մը հաճելի բան
 մ'ընես, կամ բարիք ու երախ-

տիք մը հատուցանես, մի կարծեր
որ պարտական է անոր փոխարէնն
ինքն ալ հատուցանել, կամ թէ
պէտք է դալ շնորհակալ ըլլալ
եւ բարեաց տեղ բարիք հատու-
ցանել, հապա ըսէ. Ինչ որ պար-
տական էի ընելու՝ ան ըրի. եւ
սեպէ որ ինք կրնայ զքեզ մոռնալ
ու ամենեւին քու վրայ չմտածել
քու անարժանութեանդ համար:

25. Ընդհանրապէս ամէն առթի
մէջ ինք զինքդ խոնարհեցուր, բայց
մանաւանդ անոնց առջեւ, որոնց
դէմ որ հակակրութիւն ու ատե-
լութիւն մը կը զգաս. եւ մ'ըսեր
ոմանց ըսածին պէս թէ Աս ան-
ձին հակառակ զգածմունք մը չու-
նիմ, բայց չեմ կրնար անոր քովը
կենալ, եւ իրեն հետ բան գործ
ունենալ չեմ ուզեր: Աս նեղու-
թիւնը յառաջ կու գայ իրենց
հպարտութենէն, եւ իրենց հպարտ
ու անձնասէր բնութիւնը Աստու-
ծոյ շնորհքով նուաճած չըլլալէն.
վասն զի եթէ իրենք զիրենք շնոր-
հաց աղգեցութեան տուած ըլ-

լային, շնորհքը՝ ճշմարիտ խոնարհ
հուածեան ձեռքով իրենց զգացած
ընդդիմութիւնները կը փարատէր
եւ ուրիշներուն խիստ ու անկիրթ
ընութիւնն ուրախութեամբ կրել
կու տար. ու նաեւ այսպիսի ան-
ձանց հետ շատ անգամ վարուելու
ալ բաղձալ կու տար, անկից ել-
լելու օգուտներուն ու ստանալու
արդիւնքներուն համար:

26. Սրտանց ամենուն իշխա-
նութիւն տուր ամէն կարելի
զրկանքները քեզի ընելու. իսկ
դուն անոնց փոխարէն՝ բարեկա-
մութիւն, յարգութիւն ու մէկ
խօսքով՝ ամէն տեսակ բարիք հաստ
ընդունած նեղութեանցդ տեղ,
աս է զորն որ Պօղոս առաքեալ
կը կոչէ «Յաղթել բարեաւն չա-
րին»:

27. Ամենեւին մէկու մը վրայ
տրտունջ մ'ըներ, ինչպիսի զրկանք
ալ ընդունած ըլլաս, կամ թէ ինչ-
պիսի չարակամութիւն ալ քեզի
գէմ ցուցուցած ըլլան. համոզուէ
որ քու արժանի եղած պատժոյդ

չափ անիրաւութիւն մը չեն կրնար
ընել քեզի :

28. Ինչպիսի՛ փորձութիւն ու
վիշտ որ վրադ դայ, սրտանց ու
զուարթութեամբ տար, մտածե-
լով որ դուն անոնց եւ անոնցմէ
չատ աւելիին արժանի էիր, եւ թէ
ամէն մտիթարութեան անարժան
ես : Մի բազմար նոյն վշտերէն ա-
զատիլ, բայց եթէ ան ատեն՝ երբ
որ կը տեսնես թէ պիտ'որ յաղ-
թուիս եւ զԱստուած վշտացընես :
Եւ ոչ ալ սփոփութիւն մը փնտռէ,
մանաւանդ երբ որ քեզի այնպէս
կ'երեւայ որ աս վշտերն Աստուած
մասնաւոր զքեզ խոնարհեցընե-
լու, հոգւոյդ հպարտութիւնն ու
յանձնապաստանութիւնը բժշկե-
լու համար կը խրկէ, այլ ըսէ նոյն
ատեն մարդարէին հետ. «Բարի է
ինձ Տէր զի խոնարհ արարեր զիս,
որպէս ուսայց զարդարութիւնս
քո» :

29. Որչափ որ կրնաս քու կրած
փոքր վշտերդ ամենեւին արտա-
քուստ մ'իմացըներ. զոր օրինակ

քաղց, ծարաւ, ջերմ, ցուրտ, գլխացաւ եւ ուրիշ ասոնց նման փոքր անհանդատութիւններ, բայց եթէ ան ատեն երբ որ պարտաւորեալ ես յայտնելու քու կենացդ ու առողջութեանդ պահպանութեան համար :

30. Ընդհանրապէս փառաւոր պաշտօններէ ու պատուաւոր աստիճաններէ փախիր, եւ աւելի խոնարհ պաշտօններ ընտրէ քեզի, միայն թէ Աստուծոյ կամքը զքեզ առջիններուն չկոչէ . բայց հպարտներուն պէս ալ ան փառաւոր պաշտօնները մի մերժեր, կամ որպէս զի աւելի եւս զքեզ փնտռեն ու զանոնք յանձն առնելու թախանձեն, կամ սնապարծութեան եւ կամ գովեստ ու յարգանք ստանալու համար . անկեղծութեամբ, ներքին ատելութեամբ, անձինդ վրայ չվստահանալով ու ճշմարիտ խոնարհութեան սիրով մը անոնցմէ փախիր :

31. Նոյն պատճառաւ՝ սեղանի ատեն առջեւդ դրուած գէշ կամ

անհամ կերակուրները մ'անարգեր, նոյն ատեն աղքատներուն ու մուրացկաններուն նմանէ, որոնք ախորժանօք մը իրենց տրուած աւելցուկ կերակուրները տան դրան առջին կ'ուտեն, եւ զանոնք գլտնելուն՝ իրենք զիրենք երջանիկ կը համարին :

32. Եթէ պատահի որ մէկէ մը յանդիմանուիս, կամ տեսնես որ մէկը քու պակսութեանդ վրայ քննադատութիւն կ'ընէ, եւ խօսողն ալ քեզմէ շատ վար ըլլայ, ու յանդիմանուելու շատ բան ունենայ, մանաւանդ մեծամեծ բաներ, ասոր համար անոր խրատները մի մերժեր, մի բարկանար, փոխանակ ինք զինքդ արդարացընելու՝ անոր կողմանէ դուն քեզի դէմ խօսէ ու իրեն օգնէ քու պարսաւանաց ու նախատանաց արժանի ըլլալդ աւելի եւս անոր ճանչցընել տալու. միայն թէ քու ընկերդ աս կարծուած յանցանքդ ստոյգ համարելով չգայթակղի ու չիսասի : Մտքիդ մէջ հաստատ դիր, որ աս

քեզի եղած յանդիմանութիւնն արգար ու իրաւացի է . համոզուէ որ քու վրադ դեռ շատ անկատարութիւններ կան՝ զորոնք ուրիշները կը տեսնեն , բայց քեզի չեն իմացըներ եւ քու տկարութեանդ համար կեսէն աւելին քեզմէ կը ծածկեն : Այսպէսով խոնարհութեան առաքինութեան մէջ մեծապէս կը յառաջանաս ու մեծամեծ վտանգներէ զերծ կ'ըլլաս . վասն զի ինք զինքը ջատագովելն եւ ուրիշներուն դատաստանն արհամարհելը հպարտութենէ ու յանճնապաստանութենէ յառաջ կու գայ :

33 . Ուրիշներէն առանձին սիրուիլ չուզելն ալ խոնարհութեան առաքինութիւնը ստանալու մեծ միջոց մըն է : Եւ որովհետեւ հոգին ան բանը կրնայ սիրել՝ զորն որ մեծ բանի տեղ կը դնէ , այսպէս ալ սիրուիլն ու մեծ բանի տեղ դրուիլն իրարմէ անբաժանելի բաներ են , անանկ որ մարդ չիկրնար մէկն ուզել առանց նաեւ միւսը մի եւ նոյն ատեն ուզելու . ուրեմն

Թէ որ խոնարհութեան մէջ յառաջանալ ուղեւորով մէկէ մը դովուրիւ չես ուղեր նէ, նաեւ պէտք չես ուղեւ ուրիշին սրտին մէջ տեղի ունենալ: Ասկից շատ մեծամեծ օգուտներ կը շահիս, ինչու որ նախ հոգիդ ամենեւին արարածոց բարեկամութեան չբաղձալով, կ'երթայ Փրկչին սրբազան վերաց մէջ կ'ապաւինի ու անոր երկրպագելի սրտին մէջ անպատմելի բերկրութիւն մը կը գտնէ. որովհետեւ մեծանձնութեամբ մը իրեն համար բոլոր մարդկան սրտին մէջ տեղի ունենալը մերժելով, առատութեամբ աստուածային մխիթարութեան քաղցրութիւնը կարող կ'ըլլայ ընդունիլ. որմէ զբրկուած կ'ըլլար, եթէ մարդկային մխիթարութեանց յօժարութիւն ունենար. վասն զի աստուածային մխիթարութիւններն այնպէս անխառն ու փափուկ են, որ ուրիշ մխիթարութեանց հետ ամենեւին չեն միանար, եւ աս մխիթարութիւններն ան ատեն մեզի կը

արուին, երբ որ մենք զմեզ ներկայ կենաց քաղցրութիւններէն կը բաժնենք: Դարձեալ հոգին աւելի յարմարութիւն կ'ունենայ միտքն առ Աստուած ամփոփելու՝ իրեն հետ միանալով անոր ներկայութիւնն ու անբաւ կատարելութիւնները մտածելու ատեն: Աերջապէս որովհետեւ ուրիշներէն սիրուելէն աւելի քաղցր բան չկայ աշխարհքիս մէջ, եթէ աս հաճութիւնն Աստուծոյ համար կը զոհես՝ քու սերդ ուրիշի մը շտալու համար, իրեն անուշահոտ ողջակէզ մ'ըրած կ'ըլլաս, որն որ քեզի մեծ արժանեաց պատճառ կ'ըլլայ: Եւ ամենեւին վախ մ'ունենար որ այսպէսով քու արնկերդ ունեցած սերդ կը պաղի. ոչ երբեք. անոր հակառակ աւելի պարզ եւ անխառն ու կատարեալ սիրով կը սիրես զինքը. որովհետեւ ան ժամանակ քու շահուդ համար չես սիրեր, այլ՝ պարզապէս Աստուծոյ հաճոյ ըլլալու եւ իրեն ամենահաճոյ բան մ'ընելու համար:

34. Ամէն քու գործքերդ, որ շափ որ ալ չնշին ըլլան՝ մտադրութեամբ, ճշդութեամբ ու առանց անփութութեան կատարէ, վասն զի զասոնք թեթեւութեամբ ու վաղվաղելով գործելը՝ հպարտներուն յատուկ է. ճշմարիտ խոնարհը միշտ իր վրայ կը հսկէ ու կը վախնայ որ չըլլայ թէ փոքր բանի մը մէջ ալ պակսի: Նոյն պատճառաբարեպաշտութեան աւելի հասարակ եղած կրթութիւններն ընտրէ քեզի ու անոնք կատարէ. եւ ընդհանրապէս արտաքոյ կարգի բաներէն փախիր, որոնց կը հրապուրէ զքեզ քու բերումդ. վասն զի ինչպէս որ հպարտը միշտ եզակի ըլլալ կ'ուզէ, նոյնպէս ալ խոնարհը հասարակ գործքերէն հաճութիւն կը զգայ:

35. Հաստատ դիր մտքիդ մէջ որ դուն քու անձէդ աւելի վտանգաւոր ու երկիւղալի խրատաւոր չունիս. անոր համար քու սեպհական կարծեացդ մի վստահիր, իրր կուրութենէ ու ապականեալ

սրտէդ բխած : Հաւատա նաեւ որ
 դուն քեզմէ ինչ որ կը մտածես ու
 կը դատես՝ ուրիշէ մը քննուելու
 կարօտութիւն ունի, եւ այսու հա-
 մոզմամբ, ջանա որ որչափ կրնաս,
 քու մտածմունքներդ ու խոր-
 հուրդներդ ուրիշին դատաստանին
 հնազանդեցընես. եւ երբէք դուն
 քու խորհրդովդ բանի մը ձեռք մի
 զարներ : Եթէ սլատահի որ ուրի-
 շին տուած խորհուրդը քու կինէդ
 աղէկ չըլլայ, բաւական որ մեզքի
 առիթ չըլլայ ու մէկու մը մնաս
 չպատճառէ, զանիկայ քու խորհր-
 դէդ վեր դասէ, որովհետեւ ասիկայ
 խոնարհութեան մէջ յառաջանա-
 լու միջոց մըն է, քու կարծիքդ
 զոհելով : Միւս կողմանէ ալ ներ-
 քին խաղաղութիւն ու մտիթա-
 րութիւն մը կը զգաս՝ որ կը լե-
 ցընէ ան կորստեան տեղը, որն որ
 նոյն նուազ օգտակար խորհրդին
 հետեւելէդ յառաջ կու դայ :

36. Ինչպիսի առաքինութեան
 ու շնորհաց աստիճանի որ հասած
 ըլլաս, ինչպիսի աղօթից պարգեւ

որ ընդունած ըլլաս, եւ սրչափ երկայն ժամանակ անմեղութեան ուստուածսպաշտութեան մէջ ապրած ըլլաս, ի վերայ այսր ամենայնի միշտ երկիւղի մէջ բռնէ ինքզինքդ եւ ամենեւին վրադ վստահ մի ըլլար, մանաւանդ ողջախոհութեան առաքինութեան նկատմամբ. յիշէ որ քու ներսիցիդ մէկ անսպառ անկարգութեան խորք մը ու չցամբելու աղբիւր մը կը կրես. եւ թէ տկարութենէ, անհաստատութենէ ու անհաւատարմութենէ ուրիշ բան մը չունիս: Այսպէս միշտ քու վրադ հսկէ, եւ աչուքներդ ու ականջներդ դոցէ՝ որ չըլլայ թէ այնպէս բան մը տեսնես կամ լսես, որ քու սիրտդ կարենայ արատել. ամենափոքր վտանգաւոր առիթներէն ալ փախիր. կանանց հետ անօգուտ խօսակցութիւններէ հեռու կեցիր, նաեւ շատ հարկաւոր եղածներուն մէջն ալ զգուշաւոր եղիր, եւ ճիշդ պարկեշտութիւն ու ծանրութիւն մ'ունեցիր. վերջապէս որովհետեւ առանց Աս-

տուճոյ շնորհաց բան մը չես կըր-
նար ընել, անոր համար միշտ ա-
ղաչէ իրեն որ քու վրայ դժայ, եւ
զքեզ բոսկէ մ'ալ ձեռքէ չթողու :

ՅՊ . Ինչպիսի ձիրք որ Աստուծ-
մէ ընդունած ըլլաս, եւ ինչպիսի
համբաւ որ ստացած ըլլաս, հաս-
տատուութեամբ ամրացուր զքեզ՝
ճանչնալով քու տկարութիւնդ,
անկարող ու ոչինչ ըլլալդ փորձա-
ռական համոզմամբ : Պզտիկ տղաք-
ներէն աւելի ինք զինքդ սլզտիկ-
ցուր, քեզի տրուած ամէն տեսակ
գովեսաներն ու պատիւները մերժէ
արհամարհէ : Չարմացիր անոնց
պարզմտութեան վրայ, որոնք քու
վրայ տեսնուած սուտ երեւու-
թէն խարուելով՝ քեզի յարգու-
թիւն կ'ընեն, որուն անարժան
ես, եւ գրեթէ այնպէս սեպէ որ
զքեզ ծաղր կ'ընեն, բայց եթէ
մէկը գանուի՝ որ քու արժանաւո-
րութեանդ չնայելով, անոր հա-
կառակ՝ ամէն առթի մէջ ջանայ
զքեզ խոնարհեցընել, զինքն ի-
րրեւ ամէնարդար յարգէ, եւ ըսէ

որ աս անձը զքեզ ուրիշներէն
աւելի աղէկ կը ճանչնայ . եւ
[Թէ որ կրնաս նէ՝ իրեն ծառայու-
[Թիւն մ'ալ ըրէ , եւ հաւատա որ
ուրիշներուն տուած անարժան
պատիւներէն աւելի ասորը քու
հոգւոյդ օգտակար է : Աւերջապէս
մի կարծեր որ այսպէս մտածելը
խոնարհութիւն է , այլ արդարու-
[Թիւն ու ճշմարտութիւն :

38. Եթէ պատահի որ մէկը
քեզի խիստ յանդիմանութիւն մը
տայ եւ կամ անհաճոյ գործք
մ'ընէ , միտքդ դիր որ քեզի նոյն
յանդիմանութիւնը տուողը կամ
անհաճոյ գործքն ընողը՝ այն անձը
չէ , հապա Աստուած է՝ որ իր սի-
րելի նախախնամութեամբը քեզի
աս առիթը պատրաստեց , կամ քու
պակտութիւններդ քաւելու , եւ
կամ քու հպարտութիւնդ խոնար-
հեցընելու , քեզի համբերութեան
ու խոնարհութեան գործքեր ընել
տալով . բայց եթէ այնպէս մտած-
մունք մը գայ քեզի՝ որ [Թէպէտ
Աստուած իր հայրական սիրովը

Թող տուաւ որ քեզի հետ այսպէս
 դէշ վարուին, բայց ան անձը՝
 որ աս բանիս դործիք եղաւ, Աս-
 տուծոյ դիմաման համաձայն չվա-
 րուեցաւ, այլ աւելի շարութեան
 ու ռիսի համար ըրաւ, այսպիսի
 մտածմունքը մտքէդ հանէ, վասն
 զի միայն Աստուծոյ կ'լինայ ուրի-
 շին սիրտը քննել ու մարդկան
 դաղանի խորհրդոց վրայ դատաս-
 տան ընել:

39. Երբ որ ընկերիդ եղբայր-
 սիրութեան դործք մ'ընելու ըլլաս,
 զոր օրինակ հիւանդութեան ատեն
 իրեն ծառայել, վէրքը պատել եւ
 կամ ասոնց նման դործքեր, թէ-
 պէտեւ շատ աշխատած ու ան-
 հանգստութիւն կրած ըլլաս Աս-
 տուծոյ սիրոյն համար, մի կարծեր
 որ ասոնցմով մարդասիրութեան
 դործք մը դործեցիր, մանաւանդ
 թէ հաւատա ու համոզուէ որ դուն
 ուրիշներէն ընդունեցար. եւ ըսէ
 դուն քեզի, այսպէս պաշտօն մ'ու-
 նենալս ինձի մեծ պատիւ է, եւ
 թէ ես ասոր արժանի չէի: Ճշմա-

րիա խոնարհն իրեն ըարերարները
կը համարի զանոնք՝ որոնց կը ծա-
ռայէ, որովհետեւ այսպէս իր աս
ծառայութիւնը կ'ընդունին :

40. Երբ որ ընկերիդ ծառայու-
թեան համար անարդ ու խոնար-
հեցուցիչ գործք մ'ընելու առիթ-
մը պատահի, զուարթութեամբ
ընդունէ ան առիթը, եւ այնպիսի
խոնարհութեամբ՝ իրրեւ թէ ու-
րիշները քու տէրերդ ըլլային ու
դուն անոնց ծառան, ասիկայ նաեւ
աստիճանաւ ուրիշներէն վեր եղած
ատենդ ալ ըրէ : Այսպիսի ներ-
գործութիւններով՝ առաքինու-
թեան ու շնորհաց անբաւ գանձեր
կը ստանաս, եւ ասոր համար մեծ
փոյթ պէտք ես ունենալ, ինչպէս
որ աշխարհականք իրենց իրա-
ւունքները պահելու, չկորսընցը-
նելու համար կ'ունենան : Ի՞նչ
կ'ըսեմ, չէ՛, աս ներգործութիւն-
ներով ստացուած փոքր խոնար-
հութեան մ'ալ քով բոլոր աշ-
խարհք ոչինչ է :

41. Քեզի չվերաբերած գործ-

քերու մէջ ամենեւին մի խառնուիր, նաեւ այնպիսի գործքերու մէջ՝ որոնց համար ո՛չ Աստուծոյ եւ ո՛չ ալ մարդկան պատասխան պիտ'որ տաս. վասն զի այնպէս քեզի չվերաբերած բաներու հոգ ընելը՝ գաղտնի հպարտութենէ եւ ընդունայն մեծամտութենէ յառաջ կու գայ. ասիկայ անապարծութիւնը կ'աւելցընէ ու կը անուցանէ, եւ մեծ վիշտ, անհանգստութիւն ու մտաց ցրում կը պատճառէ: Անոր հակառակ ամենեւին իր պարտքէն զատ բանի մը հոգ չունենալով՝ մարդս մեծ հանգստութիւն ու խաղաղութիւն կը գըրանէ. ինչպէս Թովմաս Գեմբացի կ'ըսէ. «Ով որ ամէն բանի մէջ լռութիւն կը պահէ, մեծ խաղաղութիւն կը վայելէ»:

42. Երբ որ արտաքոյ կարգի մահացուցման գործք մը կը գործես, ինք զինքդ զերծ պահելու համար անապարծութենէ՝ որն որ բոլոր գործքին արդիւնքը կ'եղծանէ, համոզուէ որ ուրիշներուն վայելել

կրցած հանդատութենէն ինք զինքդ
կը զրկես նէ, ուրիշ բանի համար
չէ, բայց եթէ անոր համար՝ որ
քեզի պէս մեղաւոր մը անարժան
է այնպէս հանդիստ ու դիւրու
թեամբ ապրելու իր անթիւ ան-
համար պակասութեանց ու ամէն օր
անհաւատարմութեանց մէջ իյնա-
լուն համար: Մտածէ որ ինչպէս
սանձը կատաղի ձիու մը հար-
կաւոր է, այսպէս ալ ապաշխա-
րութեան գործքերը քեզի հար-
կաւոր են, քու կրիցդ բռնութիւնը
զսպելու եւ քեզի քու պարտքերդ
կատարել տալու համար, ուր որ
ուրիշներն ի բնութենէ բարի ըլ-
լալով՝ Աստուծոյ շնորհօքն իրենց
պարտքերն աղէկ կը կատարեն,
առանց այնպէս իրենք իրենց բուռն
ըլլալու:

43. Ամէն անգամ վրաց եկած
նեղութեանց ու խոնարհեցուց-
մանց համար արտամութիւն կը զգաս
նէ, աղէկ դէմ դիր ասոր՝ յիշելով
քու անթիւ անհամար մեղքերդ,
որոնց համար որ հիմակուան կրած

վշտերէդ աւելի մեծ տանջանաց
 արժանի ես : Զանա անոր հակա-
 աակ՝ որ ուրախանաս Աստուծոյ
 արդարութեան վրայ, որն որ իր
 արքունի զէնքն է, ըստ Իմաստ .
 « Զգեցցի զրահս զարդարութիւն,
 եւ գիցէ սաղաւարտ զդատաստանն
 անաչառ . » . (ԻՏ. Է. 19.) զորն որ ի
 քեզ եւ քու վրայ կը բանեցընէ :
 Մեծարէ աս արդարութիւնը, ի-
 բրեւ իր Աստուածութեան գերա-
 զանց յատկութիւնը, եւ մեծարա-
 նօք ընդունէ անոր հարուածները :
 Նկատէ դարձեալ զանոնք իբրեւ իր
 գթութեան ու շնորհաց մէջ մէկ
 աղբիւրները : Այսպիսի հայրական
 ձեռքէ մը աս աշխարհքիս մէջ պատ-
 ժուիլն ինչչափ երջանիկ բան ըլլալը
 մտածելով, աս շնորհքը վայելէ,
 կատարեալ հպատակութեամբ մը
 ինք զինքդ անոր ձեռքը յանձնէ :
 Աերջապէս ըսէ Ս. Օգոստինոսին
 հետ . « Աստ կտրեա, աստ կիզեա,
 զի յաւիտեան խնայեսցես » : Նե-
 ղութիւնները մերժելը՝ Աստուծոյ
 փրկարար արդարութեան դէմ ա-

պըստամբիւ լ մըն է, եւ արհամարհելով մը մէկդի ընել է Աստուծոյ մատուցած բաժակը՝ որմէ Քրիստոս Տէրն մեր, թէպէտ անմեղ էր, այսու ամենայնիւ ուզեց ամենէն յառաջ խմել:

44. Եթէ այնպէս պատահի որ յանցանք մը գործես, որ ուրիշները տեսնելով զքեզ անարգեն, զԱստուած վշտացընելուդ եւ ուրիշին չար օրինակ ըլլալուդ վրայ ցաւէ. իսկ անկից եկած արհամարհանքն ու անպատուութիւնը իրրեւ ազնիւ գոհարներ եւ իրրեւ մեծ գանձ մը ընդունէ, զորոնք Աստուած քեզի պատրաստեց, որպէս զի քու յանցանքդ ուղղէ եւ որպէս զի անով քեզի օգնէ աւելի եւս զքեզ խոնարհ ու առաքինի ընելու: Բայց անոր հակառակ թէ որ անպատուութիւնը զքեզ կը խռովէ ու անհանգիստ կ'ընէ, գիացիր որ ծըմարիտ խոնարհութիւն չունիս ու դեռ հպարտութեան թունովն ապականած ես: Ուստի Աստուծմէ խնդրէ որ զքեզ բժշկէ ու ազատէ,

վասն զի եթէ քու վրայ չդժայ,
դեռ շատ անկարգութեանց մէջ
կ'իջնաս:

45. Ընկերներէդ մէկուն ատե-
լութիւն ունեցած ատենդ՝ մեծ
խոհեմութեան դործք է թէ որ ա-
նոր աղէկ բնութեան ու բնական
ձիրքերուն, կամ Աստուծոյ իրեն
տուած շնորհքներուն վրայ մտա-
ծես, փոխանակ անոր պակասու-
թեանց վրայ մտածելու, զորոնք
քու հպարտութիւնդ ու նախանձգ
անոր վրայ կ'երեւցընեն. եւ երբ որ
նոյն անձին վրայ գովելի ու աղէկ
բան մը գանես, ան քեզի առիթ
առ ամէն արհամարհանաց զգած-
մունքները սրտիդ մէջ խղզելու եւ
զինքը պատուելու: Գոնէ աս կըր-
նաս ըսել որ Աստուծոյ արարածն
է, անոր պատկերին նման արարած
մը, իր Որդւոյն պատուական ա-
րեամբը գնուած, քրիստոնեայ, իր
Աստուածութեան կնքովը գրոշ-
մուած, այնպէս անձ մը՝ որ կրնայ
զԱստուած յաւիտեանս տեսնել ու
ստանալ, եւ գուցէ ալ նախասահ-

մանեալներէն մէկն է : Ո՛վ գիտէ ,
անոր սրտին մէջ լեցուցած կամ
լեցընելու շնորհքները : Լաւագոյն
կ'ըլլայ թէ որ առանց քննելու
սրտէդ մերժես առ ամէն գէշ խոր-
հուրդները՝ զորոնք փորձիչը քու
սրտիդ կը թելադրէ , ու պատաս-
խան տաս ըսելով որ չէ թէ մինակ
աս անձը , հապա մարդկան մէջ ա-
մենէն անարդն ալ քեզմէ աւելի
արդիւնք ունի , եւ այսպէսով հաս-
տատուն ու անխախտ մնաս աս
զգածմանց մէջ :

46 . Երբ որ ուրիշներուն զքեզ
գովելը կը լսես , ներքուստ դողա ,
վախցիր , որ չըլլայ թէ բրած չնչին
բարեգործութեանցդ վարձքն ան
ըլլայ : Ներքուստ ճանչցիր քու
թշուառութիւնդ , զարմացիր որ
ինչպէս քեզի պէս անարգուելու
անձի մը միտ դրեր են : Զանա որ
խօսքը դարձընես , բայց այնպիսի
եղանակաւ մ'որ չըլլայ թէ անով
աւելի գովասանք ընդունիս , ինչ-
պէս որ սուտ խոնարհներն ու ճար-
պիկ հպարտները կ'ընեն . այնպիսի

ճարտարութեամբ մը խօսքը դարձուր որ ա՛լ ամենեւին քու վրադ չմտածեն: Աերջապէս թէ որ ան գովեսարը չէս կրնար արգելուլ նէ, ան ատեն բոլոր ան պատիւն ու գովութիւնը առ Աստուած խաւրէ, եւ ըսէ Բարուքին ու Դանիէլին հետ. «Տեառն Աստուծոյ մերոյ արդարութիւն է, եւ մեր ամօթ երեսաց», (Բար. Ա. 15):

47. Որչափ որ ուրիշներուն քեզի տուած գովասանքներուն համար պէտք ես տհաճութիւն ունենալ, նոյնչափ ալ պէտք ես ուրախանալ երբ որ ուրիշներուն գովութիւն ու պատիւ ընդունիլը կը տեսնես: Հաւտա որ անոնք ստուգիւ ան գովութեանց արժանի են, նաեւ այնպիսի պատճառներու համար, որոնք դուն ալ չէս գիտեր. եւ քու կողմանէդ օգնէ որչափ ճշմարտութիւնն ու անկեղծութիւնը կը ներէ: Նախանձոտներն իրենց մերձաւորին եղած պատիւը չեն կրնար տանիլ, եւ անոնց պատուուիլն իրենց պատուոյն նուազութիւն կը համարին.

ասոր համար է որ կերպով մը խօսակցութեան մէջ անոնց տրուած գովեստներն աղարակելու նուազը նկելու բաներ կը խօսեն: Աս կերպ վարուելէն փախիր, ու քու ընկերդ գովելով, գովէ նաեւ զԱստուած՝ որ անոր այսպիսի առաւելութիւններ տուած է եւ որմէ ծառայութիւն կ'ընդունի: Ըսէ դուն քեզի, Լաւագոյն է որ Աստուած ուրիշներն իրեն ծառայեցընէ, քան թէ զքեզ, քու պակասութեանցդ համար եւ փոխարէն քու անձնասիրութեանդ՝ որով ամէն ըրած գործքերդ կ'արատես: Ըսէ դարձեալ որ քու մերձաւորիդ աւելի կը վայլեն գովեստները քան թէ քեզի, քու հպարտութեանդ, յանձնապատասխանութեանդ ու զանոնք քեզի սեպհականելուդ համար: Աերջապէս այնչափ աւելի ուրիշներուն ըսուած բարի բաներուն վրայ ուրախացիր, որչափ որ քու հպարտ ու նախանձոտ բնութիւնդ ընդդիմութիւն մը կը զգայ: Բայց միշտ պէտք է ի բաց առնուլ ան դէպքը՝ որուն մէջ մո-

լուծիւնը կը գովուի, եւ կամ եթէ
ան գովասանքները՝ Աստուծոյ փա-
ռաց եւ ուրիշներուն շինուծեան
մնաս կը բերէ. ինչպէս թէ որ ան
գովեսաները կը արուին հերեաի-
կոսաց, ամպարշտաց եւ կամ ա-
նոնց՝ որոնք համբաւն ի շարն կամ
ի կորուստ հոգւոց կը գործածեն:

48. Երբ որ խօսակցուծեան մը
մէջ քու ընկերիդ համբաւոյն մնա-
սիլը կը լսես, ցաւ ունեցիր: Չա-
նիկայ զբաւարտողին տկարուծիւնը
դուն քեզմէ արդարացուր անմտա-
գրուծեանը տալով. բայց միւս կող-
մանէ ալ ջանա որ մէկալին համբաւը
պաշտպանես: Բայց այնպիսի իմաս-
տուն ու արդար կերպով մ'որ զինքը
պաշտպանելու ատեն աւելի եւս
աւրելու առիթ չտաս: Պաշտպանէ
զինքը, կ'ըսեմ, երբեմն իր վրայ գո-
վուծիւն բերող բաներ յառաջ բե-
րելով, երբեմն ուրիշներուն զինքը
մեծարելն ու նաեւ քու զինքը յար-
գելդ ցուցընելով, երբեմն ճարպ-
կուծեամբ մը խօսքը փոխելով, եւ
կամ նշանով մը քու տհաճուծիւնդ

ցուցընելով . . . : Ասով նախ՝ դուն
 քեզի մեծ բարու թիւն կ'ընես, եր-
 կրորդ՝ շարախօսութիւն ընողին,
 մտիկ ընողներուն ու նաեւ անոր՝
 որուն վրայ ան շար բանը կը խօ-
 սուի . բայց թէ որ ընկերիդ վա-
 տահամբաւութեան վրայ հաճու-
 թիւն կը զգաս, եւ կամ եթէ կը
 տհաճիս որ զինքը կը բարձրացը-
 նեն, եւ դէմ չես դներ աս զգաճ-
 մանց, գիտցիր որ խոնարհութեան
 անգին գանձը ստանալէն շատ հի-
 առ ես :

49. Որովհետեւ հոգեւոր ջա-
 ռաջացման համար շատ հարկաւոր
 բան է որ մարդ իր պակասութիւն-
 ները ուրիշին ազդարարութեամբը
 տեղեկանայ . անոր համար թէ որ
 մէկը քեզի այսպիսի սիրոյ գործք մը
 կ'ընէ, հարկաւոր է որ զինքը յոր-
 դորես միշտ ամէն առթի մէջ նոյնն
 ընելու : Շնորհակալութեամբ եւ
 ուրախութեամբ անոր անգարա-
 բութիւնն ընդունելէն ետեւ, նայէ
 որ ըսածն ի գործ դնես, չէ թէ
 միայն անոր համար որ ինք զինքն

ուղղելն ըստ ինքեան բարի է, հա-
 սկա միանգամայն նոյն հաւատարիմ
 բարեկամին ցուցընելու համար՝
 որ աս աշխատութիւնը փուճ տեղ
 յանձն առած չէ, եւ թէ դուն
 իր ըրած բարերարութեան վրայ
 դո՛՛հ ես : Հսկարան ինք զինքն ուղ-
 ղել ուզած ատենն ալ չ'ուզեր այն-
 պէս երեւալ իբր թէ ուրիշներուն
 օգտակար ազդարարութեանց կը
 զիջանի, հասկա նաեւ անհաճութիւն
 մ'ալ կը ցուցընէ : Իսկ ճշմարիտ
 խոնարհն իրեն պարծանք կը սեպէ
 ամենուն զիջանիլ իբրեւ Աստու-
 ծոյ, եւ ան իրեն արուած բարի
 խրատներն իբրեւ Աստուծմէ եկած
 կը համարի, առանց նայելու թէ ան
 խրատները տուողն ինչպիսի անձ է :

50. Ինք զինքդ բոլորովին Աս-
 տուծոյ նախախնամութեան ձեռքը
 յանձնէ, ինչպէս որ նոր ծնած տղայ
 մը ինք զինքը կը թողու զինքը սիրող
 հօրը ձեռքը որ խնամէ, եւ միան-
 գամայն գիտէ ալ որ հայրը զինքը
 շատ կը սիրէ : Ամէն գէպքի մէջ, ա-
 ռանց խռովելու, առանց անհան-

գիտտ ըլլալու, թող տուր որ զքեզ
 ինչ որ կ'ուզէ՝ ընէ, եւ իր ձեռքէն
 քու վրայ ինչ որ դալու ըլլայ, ու-
 բախու թեամբ, վստահութեամբ ու
 մեծարանօք ընդունէ: Ուրիշ կերպ
 վարուիլն անոր սրտին բարութիւնը
 չճանչնալէն, իր վրայ նուազ վըս-
 տահութիւն ունենալէն եւ իրբեւ
 թէ իրմէ չխաբուելու վախէն յա-
 ռաջ կու գայ. վերջապէս այլազո
 ճամբայ բռնելն իր արարածները
 աւելի աղէկ կերպով կառավառել
 սորվեցընել ուզել է: Ո՛հ, ինչ-
 պէս այսպիսի բաները ճշմարիտ
 խոնարհ, հեղ ու բարեպաշտ հո-
 գւոյ մը գէմ են: Խոնարհութիւնը
 զմեզ Աստուծոյ անչափութեան
 տակ կը ձգէ, բայց միանգամայն մեր
 ապաւինութիւնն ու մխիթարու-
 թիւնն անոր վրայ դնել կու տայ:

51. Որովհետեւ յայտնի է թէ
 առանց Աստուծոյ բարի բան մը չես
 կրնար ընել, ամէն մէկ քայլին կ'ը-
 նաս ու ամենափոքր փորձութիւն
 մ'ալ զքեզ կը կործանէ, ասով
 ճանչցիր որ բարի գործք մ'ընելու

Համար ինչչափ տկար ու անկար ես .
 եւ ինչպէս ամէն գործքերուդ մէջ
 Աստուծոյ օգնութեան կարօտ ես :
 Աս տեսութեամբ միշտ զքեզ իրեն
 հետ միացեալ բռնէ , պզտի տղու
 մը պէս , որն որ ուրիշ նեցուկ մը
 չունենալով , իր մօրը գիրկը կը յե-
 նու : Ըսէ սուրբ մարգարէին հետ .
 «Թէ ոչ Տեառն օգնեալ էր ինձ՝ փոքր
 միւս եւս բնակեալ էր անձն իմ ի
 դժոխս , » : (Սաղմ. ԶԳ . 17 :) Ըսէ
 դարձեալ նոյն մարգարէին հետ .
 «Նայեա առ իս եւ ողորմեա ինձ ,
 զի միամօր եւ աղքատ եմ ես , » :
 (Սաղմ. ԻԳ . 16 :) «Աստուած յօգ-
 նել ինձ նայեա , եւ Տէր յընկե-
 րել ինձ փութա , » : (Սաղմ. ԿԹ . 2 :)
 Աերջապէս մի դադրիր բոլոր սըր-
 տանց Աստուծոյ շնորհակալ ըլլա-
 լէն . գլխաւորաբար շնորհակալ ե-
 ղիր զքեզ ամէն կողմանէ պաշտ-
 պանելուն համար . եւ հաստատու-
 թեամբ խնդրէ , որ ինչ բանի հար-
 կաւորութիւն ունիս նէ՝ կարենաս
 ընդունիլ , զորն որ իրմէ զատ մէկէ
 մը չես կրնար յուսալ :

52. Աղօթքի ժամանակ մա-
 նաւանդ պէտք էս պատկառանք
 մը, ներքին խոնարհութիւն մը ու
 սուրբ երկիւղ մ'ունենալ Աստու-
 ծոյ մեծ վայելչութեան առջեւ, ո-
 րուն կը համարձակիս ներկայանալ.
 «Այժմ սկսայ խօսել ընդ Տեառն,
 բայց էս հող եմ եւ մօխիբ» : (Ծնն .
 ԺԸ . 27 :) Թէ որ աղօթքի ժամա-
 նակ արտաքոյ կարդի շնորհք մը
 կ'ընդունիս, ճանչցիր քու անարժա-
 նութիւնդ, եւ միտքդ դիր որ Աս-
 տուած քեզի ան շնորհքը ձրի ու իր
 մեծ ողորմութեան համար ըրաւ .
 զգոյշ կեցիր անկից քեզի բան մը
 սեպհականելու եւ անձնահաճու-
 թեամբ մը անոր շատ կապուելու :
 Իսկ եթէ յայտնի չէս ընդունիր
 նէ, միշտ գոհ եղիր այսու մտածու-
 թեամբ որ անոնց արժանի չես, եւ
 Աստուծոյ բարութեան վրայ մտա-
 ծէ որ զքեզ իր առջեւէն չիմեր-
 ժեր . համբերութեամբ ու խոնար-
 հութեամբ սպասէ, մինչեւ որ հաճի
 Աստուած քեզի այցելութիւն ընե-
 լու, ինչպէս որ աղքատ մը մեծատան

գրան առջեւ կը սպասէ, որ անոր
անցնելու ժամանակ ողորմութիւն
մ'առնու, թէպէտ ան ընդունածն
իր թշուառութիւնը սփոփելու
չատ անբաւական ըլլայ:

53. Մասնաւոր իմն եղանակաւ
չանա որ քեզի յանձնուած գործ-
քերուն յաջողութիւնը ճշդիւ Աս-
տուծոյ ընծայես, եւ անկից քեզի
ուրիշ բան չսեպհականես, բայց
եթէ անոր մէջ խառնուած պակասու-
թիւնները. ինչու որ միայն անոնք
քուկդ են. վասն զի բարին Աստուծ-
մէ կու գայ. եւ փառքն ու շնորհա-
կալութիւնն իրեն պէտք է հատու-
ցանել: Խորունկ մը գրոշմէ աս ճըշ-
մարտութիւնը մտացդ մէջ՝ որ եր-
բէք չմոռնաս: Հաւատա որ քեզի
տրուած շնորհքն ուրիշի մը տրուե-
լու ըլլար, նոյն գործքը քեզմէ շաա
աւելի աղէկ կը յաջողցնէր, եւ
այնչափ անկատարութիւններ ալ
չէր ըներ: Եթէ գործք մը յաջող-
ցնելուդ համար զքեզ կը գովեն,
մերժէ ան գովութիւնները, ըսե-
լով որ ինձի պէս անարգ գործիքի

մը նոյն գովեստները չեն վայլեր, հասլա ան մեծ ու վսեմ արհեստաւորին, որն որ կրնայ, եթէ կը հաճի նէ՝ ժայռէն ջուր հանելու համար շնչին գաւազան մը գործածել, եւ քիչ մը թրջած հող՝ կուրին տեսութիւն շնորհելու եւ անբաւ հրաշքներ գործելու:

Յ4. Անոր հակառակ՝ եթէ պատահի որ քեզի յանձնուած գործք մը չկարենաս յաջողցընել, ան տէն յանցանքը բոլորովին քու վրայ առ, իբրեւ գործքի մը չճառայող մէկը, որուն խոհեմութեան ու յաջողակութեան վրայ մարդ չի կրնար վստահիլ: Ձգոյշ կեցիք որ չըլլայ թէ յանցանքն ուրիշին վրայ ձգես, եւ ոչ ալ մանրամասն սկսիս պատմել, հաւտացընել տալու համար, որ ան գործքին չյաջողիլը քեզմէ կախուած չէր. աս կերպ վարուիլը՝ որն որ չմեռուցեալ անձանց հասարակ է, գաղտնի հպարտութենէ մը յառաջ կու գայ, որն որ չի կրնար տանիլ որ ուրիշներուն առջեւ խոնարհի ու անար-

դուրի . բաւական որ խիղճդ չստիպէ
 զքեզ ուրիշ կերպ վարուելու ,
 թող որ ինչպէս որ կ'ուզեն՝ այն-
 պէս կարծեն , դուն իբրեւ մեծա-
 գանձ ժառանգուածիւն մը ամէն
 տեսակ զրպարտութիւնն ու ան-
 պատուութիւնը սիրով ընդունէ :
 Նոյնպէս մտածէ որ թէպէտեւ
 քեզի այնպէս երեւայ թէ աս նիւ-
 թին մէջ զքեզ կշտամբելու բան
 մը չունիս՝ որովհետեւ յաջողցընե-
 լու համար անփոյթ չես եղած ,
 բայց սակայն քու մեղքերդ , յանձն-
 ապաստանութիւնդ ու վրագ ու-
 նեցած վերջին աստիճանի վստա-
 հութիւնդ Աստուծոյ օրհնութիւնը
 քեզմէ հեռացուցին . եւ վերջապէս
 Աստուած զքեզ պատժելու եւ ա-
 ւելի եւս խոնարհեցընելու համար
 թոյլ տուաւ որ դորձքերը կար-
 ծածէդ ու յուսացածէդ ուրիշ
 կերպ պատահին :

55 . Թէ որ սուրբ Հաղորդու-
 թեան՝ Աստուծոյ սիրովը բորբո-
 քած կը մերձենաս , պէտք ես նաեւ
 ճշմարիտ խոնարհութեան զգած-

մունք մ'ալ մէկտեղ ունենալ . զարմացիր Աստուծոյ այսպիսի մեծ բարերարութեան վրայ , որ ինք սրբութիւն ըլլալով՝ ինք զինքը քեզի պէս անարգ արարածոյ մը հու տայ : Որչափ որ կրնաս՝ քու անարժանութեանդ անդնդին մէջ ինք զինքդ ընկղմէ : Աս բարձրագոյն սրբութեան խորին յարգութեամբ մը մերձեցիր . եւ թէ որ հաճոյ երեւայ աս սիրելի Տիրոջ՝ որն որ նոյն Գոհութեան խորհրդեան մէջ ամենեւին սէր է , իր գգուանաց զքեզ մասնակից ընելու , ինք զինքն իր առատ քաղցրութեամբը քեզի հաղորդելու , անոր անբաւ մեծ վայելչութեան քու մեծարանքէդ ամենեւին բան մը մի սլակսեցըներ . միշտ ինք զինքդ խոնարհութեան մէջ բռնէ , մտածելով որ անկից կախում ունիս , եւ թէ անարգ ու ոչինչ ես . բայց քու ցածութեանդ ու թշուառութեանդ զգածմունքն ալ սիրտդ չսեղմէ , եւ ան սուրբ ազատութենէդ՝ զորն որ աս սեղանին

պէտք ես բերել, բան մը չպակ-
սեցընէ, հապա մանաւանդ թէ
ան զգածմունքն աւելցընէ քու առ
Աստուած ունեցած սէրդ, որն որ
այնչափ կը խոնարհի՝ մինչեւ կ'ուզէ
հոգւոյդ կերակուր ըլլալ:

56. Քու ընկերիդ միշտ զթու-
թիւն մ'ունեցիր, եւ իրեն հետ
քաղցրութեամբ ու մտերմու-
թեամբ վարուէ. մեծ փափաքով
մը իրեն օգնելու ամէն առիթները
նայէ որ ձեռքէ չհանես, եւ նպա-
տակդ պարզապէս Աստուծոյ հա-
ճոյանալն ըլլայ. սրբէ սերիչ ամէն
մնտտի վախճանները՝ որոնց համար
որ կը գործես, ու անձնատիրու-
թեան եւ ունայնութեան սկիզբ-
ները սրտէդ մերժէ, եւ ինչ բարի
գործք որ կը գործես, ամէնն ալ
առ Աստուած դարձուր. վասն զի
պէտք ես համոզուիլ թէ բարի
գործք մ'որ ծածուկ ու գաղտնի
կը պահես, որ Աստուծմէ զատ
ուրիշը չտեսնէ, քեզի աւելի մեծ
օգուտ կ'ընէ. ուր որ ան գործքին՝
զորն որ կրնայիր ծածկել ու քու

անփուլ թուլ թեամբդ ուրիշներն իմացած են, դրեթէ կէսը կորսուած է եւ բոլորովին ալ կորսուելու վտանգի մէջ: Եւ ասիկայ ողկոյզ մը խաղողի կը նմանի, զորն որ թռչունները կտցած են, եւ որուն դրեթէ իր պողէն զուրկ շրուանդը մնացած է:

57. Աստուծոյ անհաճոյ դրոնուելու փրկաւէտ երկիւղին հետ միացուր ներքին հառաչանք մը դէպ առ Աստուած՝ միշտ իյնալու վտանգին համար, որպէս զի հաճի Աստուած զքեզ աս մեծ թշուառութենէն ազատել: Շատ սուրբեր պատուիրած են աս սուրբ հառաչանքը, որն որ իրեն հետ մէկտեղ կը բերէ անձին վրայ մտադրութիւն մը, ամէն գործքերն աղէկ ընելու փոյթ մը, աստուածային ճշմարտութեանց մտածութիւնը, ժամանակաւոր բաներու արհամարհումը, սրտանց աղօթելը, Աստուծմէ դուրս եղած ամէն բաներէն կատարեալ հրաժարում մը, մէկ խօսքով՝ աս է ճշմարիտ

խոնարհութեան կամ հոգևով աղքատութեան աղբիւրը . ուստի ասիկայ քեզի սովորութիւն ըրէ, եւ որչափ կարելի է՝ տեսակ մը մշանջենաւոր աղօթք ըլլայ քեզի :

58. Հիւանդ մը, որն որ սաստիկ իր առողջանալը կ'ուզէ, կը ջանայ իրմէ հեռացընել ան ամէն բանը՝ որն որ իր առողջութիւնը կը յապաղեցընէ . նոյն իսկ առողջարար կերակուրներն ալ չափէ դուրս ուտելէն կը զգուշանայ, եւ գրեթէ ամէն մէկ պատահաւորութեան կը քննէ որ արդեօք իր առողջութեան կը մնասէ՝ թէ չէ : Այսպէս ալ դուն թէ որ հպարտութեան մահաբեր ախտէն սաստիկ կը բաղձաս ազատիլ, թէ որ ստուգիւ խոնարհութեան անդին պարգեւին կը ցանկաս, պէտք ես շարունակ հսկել որ չըլլայ թէ այնպէս բան մը գործես կամ խօսիս՝ որ զքեզ անկից հեռացընէ : Անոր համար աղէկ կ'ըլլայ, թէ որ ամէն առիթ պատահելուն՝ քննես թէ արդեօք աս ընելու բանդ խո-

Նարհուլթեան կը ձգի՞, կամ թե
անոր դէմ է, որպէս զի անոր հա-
մաձայն կամ ուրախուլթեամբ ընդ-
ունիս եւ կամ բոլորովին մերժես :
Ասոր մէջ ինք զինքդ կրթելու հա-
մար քու կողմանէդ շնորհաց ա-
մէն ազդեցուլթեանց հաւատարիմ
պէտք ես դանուիլ :

59. Քու ոչընչուլթեանդ, մե-
զացդ, տկարուլթեանդ ու թշուա-
ռուլթեանդ անդունդը մտածելէն
ետեւ, աս զարմանալի առաքինու-
լթեան հասնելու համար, զօրաւոր
միջոց մ'ալ ան է՝ որ միշտ հե-
տեւեալ խորհրդածուլթիւնն ընես :
Թե որ շեմ ջանար ես ինք զինքս
խոնարհեցընել, անտարակոյս Աս-
տուած կը խոնարհեցընէ, իր
շնորհքն ինձմէ կը բառնայ, եւ
գուցէ գուցէ թող կու տայ որ
մեծամեծ մեղաց մէջ իյնամ, որոնք
զիս աշխարհքիս առջին անպատիւ
ընեն, անանց իմ փրկուլթեանս օ-
գուտ մ'ըլլալու : ուրեմն աւելի ա-
ղէկ չէ՞ որ ես ինձի դատաւոր ը-
լամ, յօժարուլթեամբ ու կամօք ինք

զինքս խոնարհեցընելով, եւ անով
 Աստուծմէ առատ շնորհքներ ըն-
 դունիմ, քան թէ ինք զինքս վտան-
 ցի մէջ գնեմ կրելու այն զարհու-
 րելի խոնարհեցուցմունքը՝ որուն
 փորձը հպարտք շատ հեղ աս աշ-
 խարհքիս մէջէն կը սկսին առնուլ
 եւ որն որ ճաշակ մըն է աւելի
 զարհուրելի խոնարհեցուցմանց՝ որ
 յաւիտենականութեան մէջ իրենց
 պահուած են: Այսպէս իմաստուն
 մտածութիւն մը անտարակոյս քու
 սրտիդ մեծ տպաւորութիւն կ'ընէ
 եւ զքեզ կը ստիպէ որ երբեք ան-
 փոյթ չըլլաս ստանալու աս սուրբ
 խոնարհութիւնը՝ որ զքեզ այսպիսի
 սի մեծ թշուառութենէ մը կրնայ
 պահել:

60. Աս առաքինութիւնը քեզի
 սիրելի ընելու համար, մէկ կարեւ-
 ւոր մտածութիւն մ'ալ մեր աս-
 տուածային Փրկչին օրինակն է,
 զորն որ պէտք ես միշտ աչքիդ առ-
 ջին ունենալ: Նոյն իսկ ինք ըսաւ
 մեզի աւետարանին մէջ. «Աւսարուք
 յինէն զի հեզ եմ եւ խոնարհ սրբ»

տիւ, : (Մ. Գ. Ժ. Ա. 29 :) Իրօք ալ,
ինչպէս կ'ըսէ Ս. Բեռնարդոս, Ո՞ր
հպարտութիւնն է, զորն որ Քրիս-
տոսի խոնարհութիւնը չկարենայ
բժշկել : Արնայ ուրիշ մտօք մ'ալ
ճշմարտապէս ըսուիլ, որ Անիկա
միայն ստուգապէս ինք զինքը խո-
նարհեցուց. եւ երբ որ մեր խո-
նարհելը մեզի ստոյգ խոնարհու-
թիւն երեւայ՝ չխարուինք. ին-
չու որ ճիշդ խօսելով՝ մենք զմեզ
չենք խոնարհեցըներ, հասկա բուն
մեր աստիճանին մէջ կը դնենք,
որովհետեւ անարգ արարած ու
գուցէ գուցէ բիւրաւոր յանցանք-
ներով պատժապարտ ըլլալովնիս,
յաւիտենական պատիժներէն զատ
բանի մ'իրաւունք չունինք : Բայց
Յիսուս Քրիստոս մեր Փրկիչը, իր
աստիճանէն անբաւ վար իջաւ
խոնարհեցաւ. ինք ամենակարող
Աստուած, անմահ ու անեզր էակ,
իշխան եւ ամէն բանի տէր ըլլա-
լով՝ մարդ եղաւ, տկար, չարչա-
րելի, մահկանացու եւ հնազանդ
ցմահ : Յետին տնանկութեան ու

Հուսկ վերջին շքաւորութեան մէջ
 ինկաւ: Ինք՝ որ երկնից սուրբե-
 րուն ու հրեշտակաց երանութիւն
 եւ ուրախութիւն կը պատճառէ,
 հրաման տուաւ վշտաց՝ որ իշխա-
 նութիւննին իր վրայ բանեցընեն,
 եւ աշխարհքիս վրայ մարդկու-
 թեան ամէն տկարութեանց տակ
 գրաւ ինք զինքը: Ինք՝ որ յաւի-
 տենական իմաստութիւն է եւ ա-
 մէն իմաստութեանց սկիզբ, յի-
 մար սեպուելէն շխորչեցաւ: Ինք՝
 որ սրբոց Սուրբն է եւ նոյն իսկ
 Սրբութիւն, ուզեց մեղաւոր ու
 շարագործ համարուիլ ուրիշներէն:
 Ինք՝ որ երկինք անթիւ երանելոց
 բազմութենէն երկրպագութիւն
 կ'ընդունի, նախատանօք մեռնիլ
 ու խաչին վրայ անշնչանալ ուզեց:
 Աւերջապէս ինք՝ որ ըստ ինքեան
 գերադոյն բարին է, ամէն տեսակ
 վշտաց տուաւ ինք զինքը: Այս-
 պիսի խոնարհութեան օրինակ
 մ'ունենալէն ետեւ, ինչ պէտք
 ենք ընել մենք՝ որ հող ու մոխիր
 ենք: Եւ եթէ մտածելու ըլլանք

որ անարդ մեղաւորներ ենք, կըրնայ մի ինչ եւ իցէ խոնարհութիւն մեզի խիստ երեւալ:

61. Մտածէ դարձեալ Հին եւ նոր կաակարանին սրբոց մեզի թողուցած օրինակները: Եսայի՝ այն առաքինի ու նախանձախնդիր մարգարէն, Աստուծոյ առջեւ կը ճանչնար որ ինք ամենեւին անմաքրութիւն է. եւ թէ իր անձնական արդարութիւնները, այս ինքն բարի գործքերը՝ իբրեւ աղտեղութեամբ ծածկուած լաթ մըն են. «Իբրեւ զհանդերձս ապարահից»: (Ե. 47. 6:) Գանիէլ՝ զորն որ Աստուած Եզեկիէլի ձեռքով իբրեւ սուրբ ու իր աղօթքովն Աստուծոյ բարկութիւնն արդելու կրցող մարդ առջեւնիս կը դնէ, Աստուծոյ հետ մեղաւորի մը պէս կը խօսէր, եւ պէտք էմ, կ'ըսէր, միշտ ամօթով երեսս ծածկել: Ս. Գումինիկոս՝ որն որ ամենեւին սրբութիւն ու անմեղութիւն էր, իր անձին վրայ այնպէս անարդ համարում ունէր, որ կարծէր թէ Աս-

տուճոյ բարկութիւնն ան քաղաք-
ներուն վրայ պիտ'որ ձգէ, որոնց
մէջէն որ կ'անցնէր: Ասոր հա-
մար ան քաղաքները մտնելէն յա-
ռաջ՝ գետինը կ'իյնար եւ արցունքն
աչուըները, «Ա՛աղաչեմ, Տէ՛ր, կը
գոչէր, քու ամենասիրելի բարու-
թեամբդ իմ մեղացս մի նայիր,
եւ իմ աս քաղաքս մտնելուս հա-
մար քու բարկութիւնդ աս տե-
ղւոյս վրայ մ'իջեցըներ: Ս. Փռան-
կիսկոս՝ որն որ իր կենաց սրբու-
թեամբը խաչելեալ Քրիստոսի
պատկերն ըլլալու արժանի եղաւ,
հաստատութեամբ կը հաւտար ու
կը հաստատէր որ ինք աշխարհ-
քիս մէջ ամենէն մեծ մեղաւորն է,
եւ աս մտածութիւնը մտքին մէջ
այնպէս մը գրոշմուած էր, որ մէկը
կարող չէր զանիկայ մտքէն հանել:
Եւ աս պատճառը կու տար, ըսե-
լով որ եթէ Աստուած ինձի ըրած
չնորհքներն ամենէն յետին մար-
դուն ըներ, անիկայ նոյն շնորհքն
աւելի աղէկ կը գործածէր, եւ ին-
ձի պէս ապերախտ չէր գտնուեր:

Մուրացկաններու եւ աղքատներու մէջ ըլլալը, անմտի տեղ դրուիլը, եւ իբրեւ շարագործ ուրիշներէն արհամարհուիլը կը սիրէր: Աւրիշ սուրբեր՝ իրենց կերած կերակրոյն, ծծած օդոյն ու հագած զգեստին իրենք զիրենք անարժան կը սեպէին: Ոմանք Աստուծոյ մարդասիրութեան մեծ սքանչելիքը կը համարէին որ զիրենք աս աշխարհքիս մէջ կը պահէ եւ դժոխք չիջեցըներ: Աւրիշները կը զարմանային թէ ինչպէս մարդիկ զիրենք աս աշխարհքիս մէջ կը կրեն, եւ բոլոր արարածք շէն միաբանիր զիրենք ջնջելու եւ տարագրելու: Աերջապէս ամէն սուրբերը բարձր աստիճաններէն, դովեստներէն ու պատիւներէն կը սուկային, եւ իրենք զիրենք սյնպէս անարգ սեպելնէն՝ կը տեսնենք որ անարգուելու եւ արհամարհուելու կը փափարէին: Անոնցմէ աւելի իմաստութիւն, լուսաւորութիւն ու սրբութիւն ունի՞ս դուն: Այսպէս բան չէիր կրնար իշխել մտածելու,

եւ անոնցմէ շատ տարբեր ըլլալով՝
չես կրնար ըսել որ անկատարու-
թիւններով լեցուն չես : Ուրեմն
ինչո՞ւ անոնց օրինակին համաձայն՝
քու աչքիդ նուաստ պիտ'որ չե-
րեւաս : Ինչո՞ւ իրենց պէս քու
հաճութիւնդ սուրբ խոնարհու-
թիւնը պիտ'որ չընես :

62. Աս խոնարհութեան առա-
քինութեան մէջ օր քան զօր յա-
ռաջանալու եւ ամէն խոնարհե-
ցուցմունքները քեզի ընտանի ու
քաղցր ընելու համար, շատ օգտա-
կար կ'ըլլայ թէ որ քանի մը նա-
խատանաց բաներ ու նաեւ քանի
մը որոշեալ թշնամանքներ՝ որոնք
կրնան պատահիլ, մտացդ առջեւ
ներկայացընես ու ներքուստ ջա-
նաս նոյն մտքդ բերած նախա-
տինքներդ, որչափ որ ալ բնու-
թեանդ հակառակ ըլլան, իրրեւ
Աստուծոյ մեծ պարգեւներն ու մեր
Փրկչին սիրոյն հաստատուն ցոյ-
ցերը եւ ճշմարիտ սրբութեան հաս-
նելու միջոցներ ընդունիլ : Արնայ
ըլլալ որ ան առաքինութեան հաս-

նեւու համար խիստ պատերազմներ
կրեսս . բայց քաջալերութիւնդ մի
կորսընցընէր, արութեամբ հաս-
տատուն կեցիր ու կռիւք յառաջ
տար, մինչեւ որ քու հպարտու-
թիւնդ նուաճի, եւ Աստուծոյ սի-
րոյն համար ամէն բան զուարթու-
թեամբ կրելու ինք զինքդ որոշած
զգաս . աս կերպով միշտ յաղթող
կը դանուխս, ու շուտ մը զգալի յա-
ռաջադիմութիւն կ'ընես խոնար-
հութեան սուրբ կրթութեան մէջ :

63. Չանցնի որ մը, որուն մէջ
քու թշնամւոյդ ընելու յանդիմա-
նութիւնը դուն քեզի բրած չըլլաս,
աւելի զքեզ խոնարհեցընելու՝ քան
թէ անով յառաջուց դուն քեզի
սփոփութիւն մը տալու համար :
Մանաւանդ եթէ պատահի որ զօ-
րաւոր փորձութեան մը ալէկոծու-
թեան մէջ՝ Աստուծոյ զքեզ փորձե-
լու կերպին վրայ անհամբերութեան
ու ներքին տրանջման զգածմունք-
ներ ունենաս, աս տեսակ ապրս-
տամբական ոգի ունենալուդ վրայ
խստիւ ինք զինքդ կշտամբէ, դուն

քեզի դէմ զայրացիր որ դեռ աս
 աստիճանի հպարտութեամբ լե-
 ցուած ես: Ըսէ ան ժամանակ. Ի՛նչ-
 պէս կրնայ անարդ ու թշուառ մե-
 ղաւոր մը աս վշտաց համար տըր-
 տունջ ընել: Աւելի մեծամեծ վշտաց
 արժանի չէի: Ըրած յանցանքնե-
 րուս անչափութիւնը դժոխոց ար-
 ժանի է. եւ կրնամ համարձակիլ
 ժամանակաւոր նեղութեան մը վրայ
 վշտանալու, որն որ համեմատու-
 թեամբ ոչինչ է ու քիչ կը տեսէ:
 Չե՞ս դիտեր, ո՛վ անձն իմ, որ ան-
 արդութիւնն ու վշտերը քու ճըշ-
 մարիտ հացդ են, եւ ասիկայ Աս-
 տուծոյ մեծ ողորմութիւնն է՝ զքեզ
 թշուառութենէ ու չքաւորութե-
 նէ դուրս հանելու համար: Արնայիր
 առանց շնորհակալութեան զանիկայ
 ընդունիլ: Ա՛հ, անոնք մերժելը՝ ա-
 նոնց անարժան ըլլալ է, եւ միան-
 դամայն մերժել է մեծ դանձ մը՝
 որն որ դուցէ քեզմէ կը բարձուի,
 ուրիշ աւելի աղէկ դորձածողի մը
 ձեռք արուելու համար: «Տացի
 ազգի որ առնիցէ զպտուղս նորս», :

(Մտ՛ի . ԻԱ . 43:) Աստուած կ'ուզէ
 զքեզ իր սիրելեաց ու Գողգոթայի
 ճշմարիտ աշակերտաց կարգն ամ-
 բառնալ, իսկ դուն կրնաս թու-
 լութեամբ մերժել աս պատերազ-
 մը . չի կրնար մէկը պսակուիլ ա-
 ռանց յառաջագոյն պատերազմած
 ըլլալու, եւ ոչ ալ թողակն առ-
 նուլ՝ առանց օրուան ծանրութիւնը
 կրելու: Քեզի շնորհուած երջան-
 կութեան հասնելու համար ի՞նչ
 չէին ըներ դատապարտեալները,
 թէ որ քեզի տրուած ժամանակն
 ու շնորհքն իրենց տրուելու ըլլար:
 Անտարակոյս աս ու ասոր նման
 յանդիմանութիւնները քու ե-
 ռանդդ կը բորբոքեն ու բաղձանքդ
 կ'աւելցընեն՝ աղքատ կեանք ան-
 ցընելու, վիշտ կրելու եւ խոնարհ
 ու արհամարհ սեպուելու Քրիս-
 տոսի օրինակին համաձայն:

64. Անարդութեանց ու արհա-
 մարհանաց առե՛ն որչափ որ ալ
 ինք զինքդ հանդարտ ու խաղաղ
 զգաս, մի կարծեր որ կատարեալ
 խոնարհութեան հասած ես . ինչու

որ շատ անգամ հպարտութիւնն ընդարմացած կ'ըլլայ, ու առջի առիթ պատահելուն՝ կը զարթնու եւ հոգւոյն մէջ սաստիկ կոտորած կ'ընէ: Միշտ ինքնաճանաչութեան կրթութեան, պատուէ փախչելու եւ խոնարհեցուցման սիրոյն մէջ քու վրագ հսկէ: Այսու միջոցով թէ որ աս մեծագանձ ժառանգութիւնը ստացած ես նէ, զանիկայ կորսընցընելու վտանգէն ազատ կ'ըլլաս, ինչու որ խոնարհութեան անդին դանձը պահելու համար պէտք է միշտ խոնարհիլ:

65. Աս շնորհաց արժանի ըլլալու համար զՍ. Աստուածածինը քեզի բարեխօս ու պաշտպան ունեցիր: Ս. Բեռնարդոս կ'ըսէ թէ ինք ամէն արարածներէն աւելի խոնարհեցաւ, եւ ամենէն աւելի ազնուական ըլլալով՝ ինք զինքն ամենէն նուաստ ըրաւ իր խորին խոնարհութեամբը: Աս զարմանալի առաքինութեամբ շնորհաց լիութիւնն իր վրան ընդունեցաւ եւ ինք զինքն Աստուծոյ մայր ըլլալու

արժանի ըրաւ : Սուրբ Կոյան է միանգամայն մայր ողորմութեան եւ սիրոյ . ուստի մէկը թէ որ իրմէ օգնութիւն խնդրէ՝ ձեռնունայն չիմնար . ինք զինքդ վստահութեամբ անոր մայրենի գիրկը ձգէ , աղաչէ որ ընդունի քեզի համար այնպիսի առաքինութիւն մը , զորն որ ինք այնչափ պատուական համարեցաւ . իր խնամոցը վրայ տարակոյս մ'ունենար , քեզի համար կը խնդրէ ան առաքինութիւնն իր Որդիէն՝ որն որ զմարդ խոնարհ կ'ընէ ու հպարտները կ'ամչցընէ . եւ որովհետեւ ինք իր Որդւոյն քով ամէն բան կրնայ ընել , ստուգիւ իր աղաչանքն ընդունելի կ'ըլլայ : Ամէն վշտաց , ամէն հարկաւորութեան ու ամէն փորձութեանցդ ատեն իրեն դիմէ . ինք ըլլայ քու ապուէնդ , պաշտպանդ ու մխիթարութիւնդ . բայց քու իրմէ խընդրելու գլխաւոր շնորհքդ խոնարհութիւնը պիտ'որ ըլլայ . մինչեւ որ ընդունիս՝ աղաչանքդ կրկնէ , եւ մի վախնար որ ձանձրութիւն կ'ըլ-

լաս իրենն . ինք ան թախանձու-
 թիւնը կը սիրէ , զորն որ կ'ընես
 քու փրկութեանդ եւ զքեզ իր
 Որդւոյն աւելի հաճոյ ընելու հա-
 մար : Աերջապէս որպէս զի զինքը
 ստիպես քեզի աւելի բարերար ըլ-
 լալու , յառաջ բեր անոր խոնար-
 հութիւնը՝ որն որ իր Աստուած-
 մայրութեան բարձրանալուն պատ-
 ճառ եղաւ , եւ յիշեցուր իր Աստու-
 ծոյ մայր ըլլալը , որ իր խոնարհու-
 թեան անպատմելի պատուին եղաւ :

66. Նոյն պատճառաւ գիմէ
 նաեւ այն սրբոց , որոնց վրայ աս
 շքեղ առաքինութիւնն աւելի պայ-
 ճառ երեւցաւ : Չոր օրինակ Ս . Մի-
 քայէլ հրեշտակապետին , որն որ
 խոնարհներուն առաջինն է , ինչ-
 պէս որ սանդարամետը՝ հպարտաց
 առաջինը : Յովհաննէս Մկրտչին ,
 որն որ ըստ մտաց Սրբոյն Գրիգո-
 րի , այնպիսի բարձր աստիճանի
 սրբութեան հասած էր , որ մինչեւ
 զինքը Մեսիա կը կարծէին . բայց
 այնպէսով ալ , ինչպէս աւետա-
 րանիչը կը վկայէ , իր անձին վրայ

նուստտ համարում ունեցաւ : Ս .
 Պօղոսին , ան արածնացեալ առա-
 քելոյն , որն որ մինչեւ երրորդ եր-
 կինք վերանալէն եւ աստուածային
 ծածուկներն իմանալէն ետեւ ալ ,
 ինք զինքն ամէն առաքեալներէն
 փոքր կը կոչէր , եւ առաքեալ կո-
 շուելու արժանի չեմ կ'ըսէր , եւ
 վերջապէս « Ոչինչ իսկ եմ » կ'ըսէր :
 (Բ . Կոր . ԺԲ . 11 :) Այն Ս .
 Քահանայապետին՝ զորն որ քիչ
 մը յառաջ յիշատակեցինք , որն որ
 քահանայապետութեան պատուէն
 փախչելու համար աւելի աշխատե-
 ցաւ՝ քան թէ աշխարհքիս փա-
 ռասէրներն առաջին պատիւներու
 համար : Ս . Ալեքսիանոսին , որն
 որ իր հօրը տան մէջ , նոյն իսկ
 իր ծառաներուն անարդանքներն
 ու թշնամանքները պատիւներէն
 վեր դասեց : Ս . Ալոյիզիոս Գոն-
 զակային , որն որ իր ունեցած
 իշխանութենէն ուրախութեամբ
 հրաժարեցաւ , եւ մեծութեան
 փառաւորութենէն աւելի ընտրեց
 մահացեալ ու խոնարհ կեանք մը .

վերջապէս ուրիշ շատ սրբոց, զորոնք եկեղեցւոյ արձանագրութեանց մէջ կը գանենք, որոնք իրենց խոնարհութեամբը հռչակաւոր են: Հաւատա որ Աստուծոյ աս խոնարհ ծառաներն երկինքը յօժար կամօք իրենց իշխանութիւնն ի դործ կը դնեն, իրենց առաքինութեան նմանողներ ունենալու եւ զքեզ իրենց թուոյն մէջ տեսնելու համար:

67. Վերջապէս խոնարհութեան կրթութեան մէջ հաստատուելու եւ յառաջանալու համար՝ մեծ ու առատ օգնութիւն կը բնաս գանալ յաճախ խոստովանութեամբ ու հաղորդութեամբ: Աս խորհուրդներէն առաջինը՝ որուն մէջ մեր ամենածածուկ ու ամենէն աւելի ամօթալի թշուառութիւնները մեզի նման մարդու մը կը յայանենք, ամենամեծ խոնարհութեան գործք է, զորն որ Յիսուս Քրիստոս աւետարանին մէջ հաստատեց: Ս. Հաղորդութիւնը՝ որուն մէջ գոյացապէս կ'ընդունինք

զԱստուած՝ որն որ մարդ եղաւ ու
 ինք զինքն ունայնացուց մեր սի-
 րոյն համար, սքանչելի խոնարհու-
 թեան դպրոց մըն է ու խոնար-
 հութիւնը ստանալու ամենէն զօ-
 րաւոր դործ մը: Արնաս տարա-
 կոյս ունենալ, որ երբ իր սրբա-
 զան սիրաք՝ որն որ այնչափ հեղ
 ու խոնարհ է, ան սիրոյ հնոցը
 քու սրտիդ վրայ կը հանդէի ու
 գուն իրմէ մեծ փափաքով աս շնորհ-
 քը խնդրես, աս զարմանալի առա-
 քինութիւնը քեզի չհաղորդէ: Ու-
 բեմն՝ որչափ որ թոյլ տրուած է,
 ստէպ աս խորհրդեան մերձեցիր,
 ու քեզմէ պահանջած սուրբ տրա-
 մադրութիւններն ունեցիր, եւ ա-
 պահով եղիր որ աս խորհրդեան
 մէջ ան ծածկուած մանանան կը
 դանես, որն որ մեծ փափաքով կը
 տրուի փնտռողներուն:

68. Դարձեալ փոյթ տար որ
 աս ամէն խոնարհութեան կրթու-
 թեանց մէջ զգացած դժուարու-
 թիւններէդ ու ընդդիմութիւննե-
 րէդ չվհատիս: Զգոյշ կեցիր որ

շըլլայ թէ դուն ալ թոյլ աշակեր-
 տաց պէս ըսես . «Յիստ է բանդ այդ ,
 ո՞վ կարէ ըսել դմա» : (Յովհ . Զ . 61 :)
 Ասան զի ստոյգ կ'ըսեմ որ ան
 դառնութիւնները՝ զորոնք իսկզբան
 կը կրես , անմիջապէս քիչ մը ետքը
 անպատմելի քաղցրութեանց ու
 մտիթարութեանց կը փոխուին :
 Աս կրթութեանց մէջ սուրբ հա-
 նապազորդութիւն մը՝ մտաց բիւ-
 րաւոր վշտերէն զքեզ կ'ազատէ ,
 եւ զքեզ այնպիսի խաղաղութեան
 ու հանգստութեան վիճակի մէջ կը
 դնէ , որուն մէջ հոգին կը սկսի
 երկինքն իրեն պատրաստուած ե-
 րանելի երջանկութիւնը վայելել :
 Անոր հակառակ թէ որ ճշմարիտ
 խոնարհ ըլլալու անփոյթ կ'ըլլաս
 եւ հարկաւոր միջոցներն ու աշխա-
 տութիւններն ի գործ չես դներ ,
 միշտ խռովութեան մէջ կ'ըլլաս ,
 ու թշուառութեանց եւ անհան-
 գըստութեանց տակ կ'ընկճիս , ու
 թէ քեզի եւ թէ դուցէ ուրիշնե-
 րուն ալ անտանելի կ'ըլլաս , ու
 վերջապէս քու փրկութիւնդ վտան-

գի մէջ կը գնես: Եւ գէթ աս ստոյգ
 է որ կատարելութեան դուռը քե-
 ղի գոց կ'ըլլայ, ինչու որ միայն խո-
 նարհուածութեամբ կրնայ հոն մտցուիլ:
 Արեւմն սուրբ եռանդեամբ մը քա-
 ջալերուէ. ամենեւին բան մ'ալ
 չվհատեցընէ զքեզ: Աչուընեբդ վեր
 վերցուր ու մտածէ որ Յիսուս
 Քրիստոս իր խաչովը բռնաւո-
 բուած՝ կը ցուցընէ քեզի խոնար-
 հութեան ու համբերութեան ճամ-
 բան, զորն որ հորդեցին այնչափ
 սուրբեր՝ որոնք հիմայ երկինք ի-
 բրեն հեա կը թագաւորեն: Չքեզ
 կը հրաւիրէ, կը ստիպէ որ իրեն
 ու իր առաքինութեանց հաւատա-
 բիմ նմանողներուն ճամբէն եր-
 թաս: Հրեշտակները մտածէ, ո-
 բոնք քու փրկութեանդ բաղձա-
 լով՝ կ'աղաչեն քեզի որ դուն ալ
 ան ճամբէն երթաս, որն որ ապա-
 հով է ու կրնայ զքեզ երկինք աա-
 նիլ, եւ կը փափարին որ ապըս-
 ասմբ հրեշտակաց՝ իրենց ամբար-
 ասուանութեամբը կորսընցուցած
 տեղերը դուն բռնես: Աերջապէս

մտածէ որ սրբոց անթիւ բազմութիւնը քեզի կը դռչեն, որ Մենք ուրիշ կերպով չենք հասած աս մեծ փառաց՝ զորն որ հիմա կը վայելենք, բայց եթէ խոնարհութեամբ ու վշտերով. արդէն իրենք քու ունեցած բաղձանացդ մասնակից են ու կ'ուրախանան, եւ կը թախանձեն նաեւ որ չըլլայ թէ ան բաղձանքները թողուս ու նուազեցնես: Քաջալերուէ ուրեմն, առանց դանդաղելու՝ աս մեծ գործքին ձեռք զարկ: Յիշէ ան սուրբ պարտաւորութիւնները, որոնք որ զքեզ քրիստոսնէութեան հետ կապած են, եւ դողա որ չըլլայ թէ Աստուծոյ տուած սուրբ խոստումներդ մոռնաս: Աս ալ պէտք ես գիանալ որ Աստուծոյ արքայութիւնը կը բռնաբարի, եւ աս է Փրկչին բացայայտ խօսքը. «Արքայութիւն երկնից բռնադատի, եւ բռունք յափշտակեն զնա», (ՄտԹ. ՃԱ. 12:) Երանի՛ ու բիւր անդամ երանի՛, թէ որ այսպիսի բաներով զգածեալ՝ խոնարհութիւնը քու

Դիտարար ուսուցիչ կ'ընեն, յաւիտեանսական մեծութեանց արժանի ըլլալու համար :

69. Խօսքիս վերջ տալով՝ աս ալ կ'աւելցընեն՝ որ Քրիստոս Տէրն մեր կը պատուիրէր իր աշակերտներուն որ եթէ իրենց հրամայուածը կատարելու ալ ըլլան, խոստովանին որ անպիտան ծառաներ են : Այսպէս դուն ալ թէ որ աս խրատները հաւատարմութեամբ ի դործ դրած կ'ըլլաս, մի մոռնար դուն քեզի նոյնն ըսելու . «Ծառայք անպիտանք եմք» . (Ղուկ . ԺԷ . 10 .) եւ հաստատութեամբ հաւատա որ եթէ անդին խոնարհութիւնը վաստըկած ես նէ, չէ թէ քու աշխատութեանդ ու արժանաւորութեանդ, այլ Աստուծոյ անբաւ ողորմութեան ու ճրիկամաց պարտական ես . մինչեւ ցմահ սրտանց շնորհակալ եղիր իրեն այսպիսի մեծ բարերարութեան մը համար . վերջապէս աղաչէ իրեն ամէն օր որ մինչեւ նոյն վերջին ժամը պահէ աս գանձը, ուր

որ քու հոգիդ ամէն կապանքներէ
 ազատած՝ կարող պիտ'որ ըլլայ եր-
 կինք իր Արարչին գոգը վերանալ
 հոն խոնարհաց պատրաստուած
 փառքը վայելելու համար։



Վ Ճ Ե Ռ Ք

ՈՒ Մ Տ Ա Ծ Մ ՈՒ Ն Բ

ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻՆ ԵՒ
ՈՒՐԻՉ ԵՐԵՒԵԼԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ
ՀԱՒԱՔՈՒԱԾ

ԿԸ բաղձամս հաճոյական կեանք
մ'ուռնենալ. խոնարհութիւնը զքեզ
անոր կը հասցընէ: Ս. Եփրեմ.

Սիրէ խոնարհութիւնը. անիկա
զքեզ փառօք կը զգեստաւորէ: Ա-
նոր ձեռօքը ճշմարիտ փառաւորո-
թեան ճամբան կ'ընթանաս, որն որ
հրեշտակաց մէջ ու Աստուծոյ քով
կը գանուի: Քրիստոս զքեզ իր
հրեշտակաց առջին իբրեւ իր աշա-
կերտը կը ճանչնայ ու քեզի փառք
կը շնորհէ, թէ որ անոր խոնար-
հութեան հետեւող կ'ըլլաս:

Ս. Բարսեղ.

Իմաստութեան հիմը խոնարհու-
թիւնն է: Ս. Ոսկեբերան.

Չկայ գործք մը՝ որուն մէջ խոնարհութիւնը հարկաւոր չըլլայ . առանց խոնարհութեան գործք մը չի կրնար կենալ : Նոյնը .

խոնարհութիւնը՝ մայր իմաստութեան է : Նոյնը .

Ուր որ խոնարհութիւնը կը հեռանայ, հոն ի հարկէ հպարտութիւնը մուտք կը գանէ . ուր որ հպարտութիւն կը մտնէ, հոն անմիջապէս նախանձն ալ կը գտնուի . եւ ուր որ նախանձ կը մտնէ, հոն սէրը կը սպառի : Ս . Բերնարդոս .

խոնարհութիւնը հոգւոյն զարդն է : Նոյնը .

խոնարհեցուցմունքները՝ խոնարհութեան կը տանին, ինչպէս որ համբերութիւնը՝ խաղաղութեան եւ ուսումը՝ հմտութեան կը տանի : Եթէ առաքինութեան կը փափաքիս, խոնարհեցուցմունքները մ'անարգեր : Նոյնը .

Քրիստոնէական վարդապետութեան ճշմարիտ ու բովանդակ գիտութիւնն՝ ինքնակամ խոնարհութեան վրայ կը կայանայ : Ս . Օգոստոս .

Աստուած ինք զինքը խոնարհեցուց, որպէս զի մարդկային ազգին հպարտութիւնն իր պատուոյն դէմ բան չհամարի անոր շաւղացը հետեւիլը : Նոյնը .

Թէ որ հարցընես ինձի թէ կրօնի մէջ առաջին բանն որն է, կը պատասխանեմ քեզի խոնարհութիւնը : Քարձեալ հարցընես թէ որն է երկրորդը, դարձեալ կը պատասխանեմ խոնարհութիւնը, եւ որն է երրորդը, դարձեալ կ'ըսեմ քեզի խոնարհութիւնը : Նոյնը .

Բովանդակ զօրութիւնն ի խոնարհութեան է, որովհետեւ ամէն հպարտութիւն տկարութիւն է :

Նոյնը .

Միայն խոնարհեցուցմունքներով կրնայ մարդ առ Աստուած վերանալ . որովհետեւ ինչպէս որ խոնարհն Անոր կը մերձենայ, այսպէս ալ հպարտն Անկից կը հեռանայ : Նոյնը .

Ով որ առանց խոնարհութեան առաքինութիւն ժողովել կ'ուզէ, հովի մէջ աւազ կը կրէ : Ս . Գրեթոր .

Ճշմարիտ խոնարհութիւնը յայն
կը կայանայ, որ մարդ ինք զինքն
անարդ սեպէ, եւ ուրիշին վրայ
եղած բարի բանն առանց նախան-
ձարեկութեան սիրէ: Նոյնը.

Կ'ուզէս քու առաքինութեանցդ
ցոյցն ընել, սրտիդ խոնարհու-
թիւնը ցուցուր: Ս. Աճբրստիս.

Սուրբ խոնարհութիւնը միշտ
սրբութեան հիմ համարած են. եւ
ոչ իսկ երկինքը հպարտ բարձրու-
թիւն մը կրցաւ կենալ: Նոյնը.

Խոնարհութիւնը կրօնին առա-
ջին մուտքն է, ինչպէս որ Քրիս-
տոսի աշխարհք մտնելուն առջի
մուտքն եղաւ. այնպէս որ ո՛վ որ
կ'ուզէ խաղաղ ապրիլ՝ իր վրայ
խոնարհ համարում պէտք է ու-
նենալ: Նոյնը.

Որչափ որ ալ ինք զինքդ խո-
նարհեցընես, Քրիստոսի պէս խո-
նարհ չես կրնար ըլլալ:

Ս. Յերմիմիս.

Շատերը ստուերի ետեւէն կ'եր-
թան, բայց ճշմարիտ խոնարհու-
թեան ետեւէն՝ քիչերը: Նոյնը.

Վ'ուզե՞ս երկնաւոր դանձ մը ստանալ . աս աշխարհքիս բեռը վրայէդ թօթուէ նեաէ : Վ'ուզե՞ս յաւիտենական վարձք մը . ժամանակաւոր պատիւն արհամարհէ : Հանդատութեան կը բաղձաս . կռուոյ ու բարկութեան ամէն առիթներէն զգուշացիր : Վ'ուզե՞ս երկինքը մեծ ըլլալ . աշխարհքիս մէջ փոքր եղիր : Թովհ . Գե՛ճք .

Ամենեւին հոգ մ'ըներ թէ ո՛վ քու կողմդ եւ ո՛վ քեզի հակառակ է . մինակ անոր հոգ տար որ Աստուած քու ամէն գործոցդ մէջ քեզի հետ ըլլայ : Բարի խիղճ ունեցիր , ան ստեն Աստուած զքեզ կը պաշտպանէ : Արովհետեւ թէ որ Աստուած մէկու մը կ'օգնէ , մարդկան չարութիւնն անոր ամենեւին չիմնասեր : Թէ որ կրել գիտնաս , անտարակոյս Աստուծոյ օգնութիւնը կը տեսնես : Ինք գիտէ ժամն ու եղանակը զքեզ փրկելու , եւ անոր համար պէտք ես զքեզ բոլորովին իրեն տալ : Աստուծոյ դորձքն է օգնել ու ամէն

խոռովու թէնէ ազատել: Խոնարհու-
 թիւնը պահելու համար շատ ան-
 գամ մեծապէս կ'օգնէ որ ուրիշները
 մեր յանցանքներն ու պակասութիւն-
 ները գիտնան եւ զմեզ յանդիմանեն:

Թէ որ մարդս իր յանցանաց
 համար ինք զինքը կը խոնարհե-
 ցընէ, ան ատեն ուրիշներուն հետ
 շատ դիւրաւ կը հաշտուի, եւ իրեն
 դէմ բարկացողը դիւրաւ գոհ կ'ը-
 նէ: Աստուած խոնարհը կը պաշտ-
 պանէ ու կը փրկէ. խոնարհը կը
 սիրէ ու կը մխիթարէ. խոնարհ
 մարդկան կը զիջանի. խոնարհին
 մեծ շնորհք կ'ընէ, եւ իր խոստ-
 մանց համաձայն՝ զանիկայ ի փառա-
 ւորութիւն կը բարձրացընէ: Խո-
 նարհին իր գաղտնիքները կը յայ-
 անէ, եւ քաղցր կերպով զանիկայ
 իրեն կը քաշէ, կը հրաւիրէ: Խո-
 նարհը՝ թէ որ իրեն արհամարհանք
 մ'ըլլուի, միշտ խաղաղ է, ինչու որ
 յԱստուած կը հանդիս եւ ոչ յաշ-
 խարհ: Մի կարծեր թէ իրաւունք
 մ'ունիս զքեզ ուրիշներէն ցած
 չհամարելու: Նոյնը.

Թարգուն ըլլալը սիրէ, եւ բաղձա
ոչինչ համարուելու: Նոյնը.

Թէ որ զքեզ ուրիշներէն վար
կը դնես, ամենեւին քեզի մնաս մը
չ'ըլլար. բայց կը մնասէ, եթէ զքեզ
մէկէ մ'ալ վեր դասես: Նոյնը.

Ո՛վ որ Քրիստոսի խաչը չիփըն-
տուեր, անիկա նաեւ Անոր փառա-
ւորութիւնն ալ չիփնտուեր: Կ'ու-
զե՞ս զԱնիկա ստանալ. առանց խաչի
մի խնդրեր: Ս. Յովհ. Խաչէան.

Խոնարհութիւնն աղբեր մը կը
նմանցուի, որմէ ամէն կարելի բա-
րիքները կը հոսեն: Ս. Թեօբեոս.

Ո՛վ խոնարհութիւն, ինչչափ
բարիք կը բխէ ան սրտէն՝ որուն
մէջ քու բնակութիւնդ դրած ես.
Եւ որչափ օգտակար է մերձեկնալ
այնպիսիներուն՝ որոնք աս առաքի-
նութիւնը ստացած են: Նոյնը.

Խոնարհութիւնը չիվախնար եր-
կրաւոր բարեաց կորստենէն, եւ
զմեզ ազատ կ'ընէ ամէն տեսակ հո-
գերէ ու խռովութիւններէ՝ որոնք
աս աշխարհքիս մէջ մեր հանդիսորը
կրնան վրդովել: Նոյնը.

Ո՛վ որ խոնարհութիւն ունի, ոչ գժոխքին ոգիներէն եւ ոչ ալ աշխարհքիս հրապոյրներէն պէտք է վախնալ, ինչու որ Աստուծոյ արքայութիւնը ստացած է: Նոյնը.

Խոնարհութիւնը հոգւոյն վերքերը բժշկելու հարկաւոր միջոց մըն է: Նոյնը.

Տէրն մեր, որն որ նոյն ինքն ճշմարտութիւն է, խոնարհութիւնն այնչափ շատ կը սիրէ՝ որ մեզի ալ կը պատուիրէ զանիկա մեծապէս սիրելու, որովհետեւ խոնարհ ըլլալն՝ ուրիշ բան չէ, բայց եթէ ի ճշմարտութեան ընթանալ: Նոյնը.

Մարդս երկրիս յատակն իջնալէն եւ երկայն ատեն անոր մէջ ծածկուած մնալէն եւ շատ աշխատելէն ետեւ՝ ոսկի ու պատուական քարեր կը գտնէ: Այսպէս նաեւ մարդ երկայն ժամանակ ինք զինքը խոնարհեցնելէն ու մարդկան առջեւ ծածկելէն ետեւ՝ կը գտնէ խոնարհութեան գանձը, որն որ մեր հոգւոյն համար աս աշխարհքիս

Հարստութիւններէն բիւր անգամ
 թանկագին բան է: Անոր համար
 ամենեւին աշխատութիւններէ ու
 դժուարութիւններէ չվհատինք,
 աս առաքինութեան գիմելու:

Սէնտերի.

Ինք զինքը նուաստ համարելն ու
 Արարչին սէրը՝ հոգւոյն թեւ կը
 շնորհեն: Եւ թէ որ գէպի երկինք
 թռչելու ըլլայ, երկրի վրայ դա-
 դար չիփնառեր: Լընտար.

Ճշմարիտ խոնարհութիւնը՝ ար-
 տաքուստ խոնարհ երեւալ չիխըն-
 դրեր եւ խոնարհական խօսքեր
 քիչ կը գործածէ, որովհետեւ չէ
 թէ մինակ ուրիշ առաքինութիւն-
 ները ծածկելու կը ջանայ, հապա
 նաեւ մարդկանց տեսութենէն կը
 փախչի, եւ եթէ ներեալ ըլլար՝
 սուտ ըսել, ինք զինքը գովել եւ
 ուրիշներն անպատուել, փութով
 այսպէս հպարտի ու նախանձուտի
 գործքերը կը գործէր, որպէս զի
 ինք զինքը նոյն մոլութեանց տակ
 ծածկէ: Ս. Փրանկ. Սալէզ.

Անոնք՝ որոնք որ ստուգիւ խո-

Նարհուլթեան առաքինուլթիւնը ստացած են, հեղ ու խաղաղարար են, ցաւած ու զղջացեալ սիրտ մ'ունին, որն որ ի կարեկցուլթիւն եւ ի գլթուլթիւն կը միտէ. հանգարտ, զուարթ, հնազանդ, մտադիր են, եռանդնոտ ու ամենեւին մէկու մը չհակառակող. միշտ յետին տեղը կ'ընտրեն. կ'ուրախանան երբ որ մէկը զիրենք կը նախատէ. ուրիշներն իրենցմէ լաւագոյն կը համարին. իրենց տկարուլթիւնը տեսնելով՝ ուրիշներուն տկարուլթեան կը համբերեն, եւ զիրենք ուրիշներէն վեր դասելէն հեռու կը կենան: Նախատինքներն ու արհամարհանքները խաղաղուլթեամբ կրելը՝ փորձաքար մըն է, որով կ'իմանանք թէ արդեօք խոնարհուլթեան մէջ կը յառաջանանք: Քէնէլն.

Խոնարհուլթիւն ունեցող հոգւոյ մը ինչ մեծ բարիք է խոնարհուլթիւնը, երջանկուլթեան ու խաղաղուլթեան մէջ յառաջանալու համար: Խոնարհուլթեան մէջ մարդ

կը գանէ բիւրաւոր օրհնութիւններ թէ՛ իրեն ու թէ՛ ուրիշներուն հետ վարուելու համար, ինչու որ Տէրն մեր իր շնորհքը խոնարհութեան կու տայ: Նոյնը.

Մինակ մեր աչուքներն առ Աստուած դարձրնելով եւ զինքն անգազար սիրելով կրնանք մենք զմեզ մոռնալ, խոնարհիլ մեր ոչընչութեան վրայ՝ որն որ զմեզ շարուցած է, եւ քաջութեամբ զմեզ Աստուծոյ մեծվայելչութեան տակ ձգել, որն որ ամէն բան իր մէջը կ'ամփոփէ: Սիրենք զԱստուած, ան ատեն խոնարհ կ'ըլլանք: Սիրենք զԱստուած, ան ատեն մենք զմեզ սյնպէս անկարգ սիրով չենք սիրեր: Նոյնը.

Խոնարհութիւնն ու վստահութիւնը մէկտեղ կ'ընթանան: Զղջման դառն արմատէն խոնարհութեան սիրուն ծաղիկը յառաջ կու դայ, եւ ասիկայ իրեն հետ առ Աստուած վստահութիւն ալ կը բերէ: Փր. Լեոբ. Երոլպերիէ Կոն.

Գեղեցիկ խոնարհութիւնն ամէն

առաքինութեանց պաշտպանն է,
 եւ ստուգիւ առանց անոր ուրիշ
 ամէն առաքինութիւնները մինակ
 դատարկ երեւոյթ մ'ունին: Խո-
 նարհութիւնը մարդը սրտին թա-
 քուն խորքը կը տանի եւ աստուա-
 ծային լուսով մը իր բնական
 ոչընչութիւնն անոր կը ցուցընէ:
 Նոյնը.

Աշխարհքս աս առաքինութեան
 վրայ ամենեւին դաղափար չունի.
 անոր համար ընդհանրապէս եւ ոչ
 մէկ առաքինութեան վրայ դաղա-
 փար ունի, որովհետեւ առանց
 խոնարհութեան՝ եւ ոչ մէկ առա-
 քինութիւն մը Աստուծոյ առջին
 արժէք կրնայ ունենալ: Նոյնը.

Մինակ ճշմարիտ խոնարհու-
 թեան քով կը բնակի ճշմարիտ
 անկեղծութիւն: Խոնարհն ամէն
 փոքրոգութենէ ազատ է, որով-
 հետեւ զԱստուած մինակ կը նկա-
 տէ եւ միայն Անոր հաճոյ ըլլալ
 կ'ուզէ: Նոյնը.

Գաւիթ կ'ըսէր. Կ'ուզեմ իմ
 աչքիս նկուն ըլլալ: Աս է ճշմա-

րիտ խոնարհութիւնը : Առանց ա-
 սոր ամէն խոնարհութիւն ոչինչ եւ
 ընդունայն է : Այեղծեալ խոնարհու-
 թիւնն Աստուծոյ ու մարդկան առ-
 ջեւ զազիր բան է . սակայն կայ ար-
 տաքին խոնարհութիւն մ'ալ՝ որն
 որ կեղծաւորութիւն չէ, բայց բուն
 կամ հարազատ ալ չէ . այս ինքն՝
 երբ որ մենք մեր կարծեալ խոնար-
 հութիւնը վարձուց արժանի կը
 համարինք, երբ որ մեր խորաման-
 կութիւնը, մեր ունայնասէր ընու-
 թիւնն այսպիսի կարծեալ խոնար-
 հութեանէն առիթ կ'առնու հպար-
 տանալու : Աս խարէութիւնը նոր
 բան չէ եւ շատ վտանգաւոր է :
 Ճշմարիտ խոնարհը Գաւթին պէս
 իր աչքին փոքր է : Մոյնը .



lp

Am

0075700

2013

2001

